Azg
armenian daily

20 ՄԱՐՏ 2004 ՇԱԲԱԹ 49 (2974)

Մելգոնյանցի շրջանավարտները մտադիր են դատի տալ ՀԲԸՄ-ի ղեկավարությանը

Կիպրոսի Մելգոնյան կրթական հաստատությունը 2005 թ. հունիսին փակելու մասին ՀԲԸՄիության կենտրոնական վարչության որոշումից հետո («Ազգ», 18 մարտի, 2004 թ.) ավելի են աճուժացել Բարեգործականի ղեկավարությանը նման որոշման համար դատի տալու մասին խոսակցությունները կրթօջախի տարբեր տարիների շրջանավարտների միջեւ, որոնք տարբեր երկրներում ունեն սանուց կազմակերպություններ: Այս կապակցությամբ «Փրկել Մելգոնյանը» շարժման կայքէջում (www.SaveMelkonian.org) դասական գործ հարուցելու մասին առաջարկներն ավելի հաճախակի են դարձել:

Նույն կայքէջում հնչում են նաեւ այլ առաջարկներ ու պահանջներ, ինչպես նաեւ գույքային ենթակայության ենթարկել ՀԲԸՄիության վերջին 20 տարիների հաշիվները Մելգոնյան վարժարանի կտրվածքով: Ուրիշներն առաջարկում են դադարեցնել անդամակցությունը ՀԲԸՄիությանը, միաժամանակ հստակեցնելով, որ իրենց դժգոհությունն ուղղված է ոչ թե կազմակերպությանը, այլ ղեկավարությանը:

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ

Քաղաքական դաշտում բոմժի հոգեբանությունը վտանգավոր է

ԿԱԲԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հենց եղանակի կտրուկ փոփոխությամբ բացատրեց ՀՀ նախագահը ընդդիմության իշխանափոխություն իրականացնելու սեւեռուն գաղափարը՝ Երեւանի Կենտրոն համայնքում երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ: Բացառապես տեղական ինքնակառավարման խնդիրներին նվիրված ճեպազրույցում ներքաղաքական իրավիճակին վերաբերող միակ տողն էր սա, եթե չհաշվենք հաջորդող գնահատականը, թե քաղաքական դաշտում բոմժի հոգեբանությունը վտանգավոր է: Սա նույնպես, իհարկե, հասցեագրված էր իշխանափոխության սցենարիստներին:

Հանրապետության գլխավոր դատախազի փոփոխությունը նախագահը մեկնաբանեց այդ կառույցները բոլոր առումներով հզորացնելու՝ եւ կարգուկանոնի, եւ կոռուպցիայի դեմ պայքարը ակտիվացնելու անհրաժեշտությամբ: «Ես համարում եմ, որ դատախազության հեղինակությունը որոշակի անկում է արձել եւ պետք է վերականգնել»: Նախագահը ակնարկեց, որ նաեւ ներքաղաքական իրավիճակը կայուն պահելու ենթատեքստ կա կադրային այս փոփոխության մեջ, եւ «տեսնելու եմ՝ ինչ ստիճանի կա»:

Լրագրողներից մեկի հարցին, թե ինչ կարծիքի է նախագահը պատահաբար անծանոթ զավակների հասարակության մեջ լկտի պահվածքի մասին, ինչը վերջին շրջանում, Ռ. Քոչարյանն ասաց. «Իհարկե, բացասաբար եմ վերաբերվում, անքույլատրելի եմ համարում», եւ մաղթանք հայտնեց, որ շրջապատում համեստությունը դառնա ղեկավար այրերի ընտանիքի մակարդակը, հակառակ դեպքում սանձարձակության նույնիսկ աննշան, փոքր դրսեւորումները բացասական վերաբերմունք են ձեւավորում ոչ միայն տվյալ ընտանիքի, այլեւ ողջ իշխանական ինստիտուտի հանդեպ:

Տես էջ 2

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԿՈՏԱՅՔՈՒՄ

«Երբ էս իշխանություններին տաղալեմ, երկու գուլ կմորթեմ»

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐԿԱՐՅԱՆ

Երեկ «Արդարություն» դաշինքի անդամների հերթական հանդիպումը Կոտայքի մարզի բնակչության հետ էր: Հարգանքի կայարանամերձ հրապարակում, այդ բուք ու բորանին, առաստեղացող ձյանը, ժողովուրդը մի քանի ժամ ուշադրությամբ ու հուզմունքով լսում էր դաշինքի անդամներին ու միաձայն պահանջում ներկա իշխանությունների շուտափույթ հեռացումը:

«Հանրապետություն» կուսակցության նախագահ Ալբերտ Բազեյանն իր ելույթում նշեց, որ «արդեն մեկ տարի է անցել նախագահական եւ ԱԺ ընտրություններից ու հստակ երեւում է, որ ոչ լեգիտիմ իշխանությունները սղաոնալիզ են երկրի անվտանգության ու զարգացման համար եւ այսօր արդեն լուրջ մարտահրավերներ են ծառացել Հայաստանի Հանրապետության առջեւ, մինչդեռ կոալիցիոն կառավարությունն ընդամենը լուծում է իմիջադատության խնդիրներ, պրոցներն ամուր պահելով են առաջնորդվում...»: Իսկ իշխանավորներին պետք է թողնել իրենց պրոցներին՝ որ Բազեյանի հարցին բազմահազար հրապարակները ծեղքերը վեր բարձրացրին եւ սկսեցին վանկարկել, ոչ, ոչ, հեռացնել Քոչարյանի հետ մեկտեղ... եւ ինչքան կարող եք շուտ:

Ժխկ խոսնակ Գրիգոր Հարությունյանն էլ նշեց, որ բոլոր հանդիպումների ժամանակ ժողովուրդը պահանջում է որ առաջ ազատվել այս անօրինական իշխանություններից ու հնարավորինս կարճ ժամանակում է պահանջում:

Տես էջ 2

Բենոն Սեւանն ամբաստանվում է Հուսեյնից կաշառք ստանալու մեջ

ՄԱԿ-ը ներքին ընթացակարգ է սկսել այն տեղեկությունների կապակցությամբ, թե «Նավթ պարենի դիմաց» իրաքյան ծրագրի պատասխանատուներից մեկը կաշառքներ է ստացել Սադդամ Հուսեյնի վարչակազմից: «Վաշինգտոն փոստ» թերթը նշում է, որ ՄԱԿ-ի ուշադրության կենտրոնում է հայտնվել կազմակերպության հիշյալ ծրագրի գործադիր տնօրեն, հայազգի Բենոն Սեւանը: Իրաքի առանձին իշխանավորներ նրան ամբաստանում են Հուսեյնի վարչակազմից նավթային վաուչերներ ստանալու մեջ:

Ամբաստանությունների համար ապիր են ծառայել Իրաքի նավթարդյունաբերության նախարարության փաստաթղթերում հայտնաբերված գրառումները: Նախարարության գաղտնի ցուցակներում նշված են Հուսեյնից նավթային կաշառքներ ստացած 270 ֆիզիկական եւ իրավաբանական անձանց անուններ: Կաշառակերների ցանկում ՄԱԿ-ի պատասխանյայի անվան հայտնվելը լուրջ կասկածներ է առաջացնում «Նավթ պարենի դիմաց» ծրագրի իրավաբանական ու ֆինանսական արդարության առնչությամբ, ծրագիրն ըդհանուր ծավալը 6 տարում կազմել է 60 մլրդ դոլար:

Իրաքյան հրապարակություններից մեկի տվյալներով, Բենոն Սեւանը ստացել է 1,8 մլն բարել իրաքյան նավթի վաուչեր: Ներկա գներով այդ նավթը կարժենա ավելի քան 67 մլն դոլար: Ինքը՝ Բենոն Սեւանը, ներկայումս ածականում է եւ իր մամլո քարտուղարի միջոցով հերքում է Հուսեյնից կաշառք ստանալու ամբաստանությունը:

Պ. Ք.

ՀԱՄԱՌՈՏ

Պարտքի հատուցում՝ հողահատկացմամբ

Քաղաքային իշխանությունները ջեռուցման դիմաց քաղաքացիների մեծ պարտքերի դիմաց «Հայռուսգազարդին» փոխհատուցում են հողով: Դա վերջինիս հնարավորություն կտա 60 հազար նոր բաժանորդ (մոտ 200հզ բնակիչ) ավելի ունենալ: Սա կազմակերպության համար «հոգուն վրա հասավ»-ի նման մի բան եղավ, քանի որ խրված է պարտքերի մեջ, եւ որեւէ բանկ չի համարձակվում ֆինանսավորել նրան: Այս մասին երեկ լրագրողներին տեղեկացրեց ՀՀ նախագահը:

Կ.Գ.

ԹՄՄ-ը մեծարեց Վիոլետա Գեւորգյանին

Երեկ Թեթեյան մշակութային կենտրոնում կայացավ հանրապետության ժողովրդական արտիստուհի Վիոլետա Գեւորգյանի ստեղծագործական երեկոն: Բացման խոսք ասաց Թեթեյան մշակութային միության նախագահ Ռուբեն Միրզախանյանը: Սիրված արտիստուհու մասին խոսեցին եւ նրա ստեղծագործական ճանապարհը վերլուծեցին ինչպես թատերագետները, այնպես էլ Վիոլետա Գեւորգյանի նախկին գործընկերները՝ Հռիփսիմե Ղափլանյանի անվան երեւանի դրամատիկական թատրոնից:

Ստեղծագործական երեկոյի ընդարձակ տեղեկատվությունը՝ հաջորդիվ:

Կահիրեում 3 հայերին դանակահարել է հոգեկան հիվանդը

ՍՏՍՍԲՈՒԼ, 19 ՄԱՐՏ, ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ: Մարտի 16-ին Կահիրեում իրենց բնակարանում խմմնելի ոճիրի զոհ են դարձել երեք հայեր՝ 75-ամյա Հակոբ Էմերճյանը, նրա դուստրը՝ Վանիա Էմերճյանը եւ նրանց հարեւան Մարո Փարմաջյանը: Ոճրագործը նույն շենքում բնակվող 48-ամյա Մուսթաֆա Քեմալ Թումին է, որի համար ասվել է, որ արդեն 15 տարի հոգեկան հիվանդ է:

Ոստիկանության տրամադրած տեղեկությունների համաձայն, Մուսթաֆա Քեմալ Թումին հայտնել է, թե սպանությունը կատարել է, որովհետեւ երկար ժամանակ ի վեր իրեն անհանգստացրել են Էմերճյանների շան հաչոցներն ու աղմուկը: Ինչպես գրում է Ստամբուլի «Մարմարա» օրաթերթը, ոճրագործը թակել է Հակոբ Էմերճյանի տան դուռը, եւ երբ դուռը բացվել է, անմիջապես դաշունահարել է տանտիրոջը: Ոճրագործը սպանել է նաեւ հորն օգնության հասած Վանիա Էմերճյանին: Այնուհետեւ սանդուղքի վրա սպանել է դեմ-հանդիման դուրս եկած հարեւանուհի Մարո Փարմաջյանին, որը ցանկացել է ներքեւ իջնել՝ պարզելու կատարվածը:

Արաբ լրագրողները գուցադրաբար լքել են Փաուելի ասուլիսը

ԿԱՅԻՐԵ, 19 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Արաբական զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչները ի նշան Իրաքում անվտանգության բացակայության եւ ամերիկացի զինվորների կողմից իրաքցի երկու լրագրողների սպանության դեմ բողոքի, այսօր ցուցադրաբար լքել են Բաղդադում Քուլին Փաուելի անցկացրած մամուլի ասուլիսը: Փաուելն այսօր առավոտյան անսպասելի այցով ժամանել է Բաղդադ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Սոցիալական հարեւանը՝ մեր գլխին պատուհաս

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Որևէ մոտենում է «Սոցիալական հարեւանի մասին» օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը հուլիսի 1-ը, այնպես բորբոքվում են կրքերը հարեւան ընդունողների եւ չընդունողների միջեւ: **«Ազգը»** մի քանի անգամ անդրադարձել է «Ընդդեմ մարդկանց համարակալման» միավորման կազմակերպած կլոր սեղաններին, որի անդամները միաբերան հայտարարում են սոցիալական հարեւանի վտանգավոր լինելն ազգային անվտանգության, կրոնական եւ մարդու իրավունքների ոտնահարման տեսանկյուններից: Երեկ այս հարցը նորից կրվոս ննարկումների նյութ էր դարձել «Օգոստոսի 23» հասարակական կազմակերպության հրավիրած հանդիպման ժամանակ, որին, ի տարբերություն նախորդ կլոր սեղանների, մասնակցում էր սոցաշխ նախարարության պետական ծառայության հարցերով վարչության պետ Արտեմ Ասատրյանը, իսկ հանդիպմանը հրավիրված հայ առաքելական եկեղեցու Արարատյան թեմի առաջնորդ Նավասարդ Կոճյանն այդպես էլ չներկայացավ: Սկզբում բողոքի խոսք ասացին ներկաներից մի քանիսը:

Տես էջ 2

Քննարկում

Կուսակցական կանայք առաջ են գնում, մյուսները դոփում են տեղում

Դժվար է հավատալ, որ Հայաստանում կգան ժամանակներ, երբ ամեն մի դեռահաս հայուհի կերազի քաղաքական գործիչ դառնալ, որովհետեւ մեր կանայք որքան էլ հետապրվում են քաղաքականությամբ ու հաճախ տղամարդկանցից ավելի քունդ վիճում քաղաքական թեմաների շուրջ, բայց քաղաքական գործիչ դառնալու մասին գրեթե չեն մտածում: Այդ մասին են վկայում կատարված բոլոր հետազոտություններն ու հարցումները: Ինտելեկտուալ կանայք գերազանցապես զբաղվում են հասարակական գործունեությամբ, ինչը, սակայն, նրանց հնարավորություն չի տալիս քաղաքական դաշտ մտնել, ուր ամուր պատնեշներ են ծգել տղամարդ գործիչները: Վերջիններիս հետ հավասար դիրքերում այսօր գործող սակավաթիվ կանայք, սեփական կաշվի վրա զգալով այդ ծանր պարտականությունը, ջանում են իրենց կողմից տեսնել նորանոր կանանց առկա քաղաքական անհավասարակշիռ վիճակը վերացնելու համար:

Նրանց աջակցելու նպատակով Հայաստանում Մ. Նահանգների դեսպանատան հասարակայնության հետ կապերի բաժինը երեկ անցկացրեց կանանց միջազգային ամսվան նվիրված ֆորում ննջարկելու կանանց դերը արտաքին եւ ներքին քաղաքականության, բիզնեսի, լրատվության եւ իրավական ոլորտներում:

Կանայք արտաքին քաղաքականության մեջ զեկուցողների թվում էր նաեւ Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպան Թորդա Էբբոս-Ուոթը, որը «դիվանագիտորեն» անտեսելով իրեն ուղղված մեղադրանքները երեկ էլ կրկնեց, որ «բրիտանական կառավարությունը ցավում է հայերի հետ կատարվածի համար» վերստին խուսափելով ցեղասպանություն բառից: Գուցե արժեր, որ դեսպանն անդադառնար այն խիստ հետաքրքիր, թե ինչպես են կանայք կատարում են հավատարիմ եւ սանիտարի պատասխանները: Դժգոհություններ եղան նաեւ մարտի 8-ին կայացած կանանց ցույցի վերաբերյալ նախագահ Քոչարյանի արտահայտած մտերից եւ ցույցը հանրային հեռուստատեսության 02 լրատվական ծրագրով ցուցադրելուց:

«Արժանապատվություն» կուսակցության նախագահ Լյուդմիլա Հարությունյանը հատկապես շեշտեց մեր հասարակության քաղաքացիական ակտիվությունն ուժեղացնելու անհրաժեշտությունը, քանի որ հասարակությունն աշխատում է պարզունակ սխեմայով, անմասն մնալով երկրում ընդունված կարեւորագույն որոշումների կայացմանը: «Հասարակությունը պետք է ակտիվանա եւ կանայք պետք է լինեն առաջատարներ», ասաց նա:

Հետաքրքրական էր կանայք լրատվության մեջ թեմայով «Ինտերնյուզ» հասարակական կազմակերպության տնօրեն Նունե Սարգսյանի ելույթը: Նա խոսեց իրենց հետազոտությունների մասին, որոնցից մեկի համաձայն մեր հասարակության համար ավելի առաջնային են սոցիալական, քան կանանց հիմնախնդիրները, իսկ ըստ երկորդի կանանց չեն գոհացնում իրենց համար նախատեսված հեռուստահաղորդումների բովանդակությունն ու պրոֆեսիոնալ մակարդակը:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

«Երբ էս իշխանություններին տաղալեմ, երկու ցուլ կմորթեմ»

Սկիզբը էջ 1

«Անցել է մեկ տարի եւ ինչպես Քոչարյանն իր երդումը փակարերի հետեւում տվեց, այնպես էլ մնաց փակարերի հետեւում... ու նայում է, թե Պուտինը ինչ է ասում, մի բանի որ հետո կրկնում է, ոնց որ գիտեմ ով լինի», ու ամբոխից հնչեցին թութակը, թութակը...

Անիկ Գրիգորյանը, 50 տարեկան, Ջրաոաս գյուղից, զայրացած էր, որ ժողովրդին հասցրել են ծայր աստիճան չվավորության ու իր 10 անդամանոց ընտանիքը սոված է օրերով, ոչ ոք չի աշխատում, ոչինչ չունեն, «մի հատ ֆոլարյանական ոչուփուչ էլած Սամվել կա, ածական անունն էլ կակոյա, օգնության փողերը կերավ ու ժողովրդին խաբեց մեկ մեզոկ ցորեն տվեց ու հիմա դրա համար էլ 1000 դրամ տեղափոխելու հարկ պահանջեց... Սելավն ամեն ինչ ջնջեց, տարավ, ու նայի թե ես ծամփեին ինչ եղավ: Իսկ ես Քոչարյանը հատուկ իրա լիժա ջելու տուռնիկ թողնելու համար ծաղկածոր տանող իր համար ծամփա է սարքել, որ ժողովրդի երեսը չտեսնի: Իսկ որ ասում են, թե Քոչարյանն ընտրվել է, ասողը գլուխը պահին է տվել, էդպես էլ կգրես, եթե ծիշտ գրող ես: Ես 50 հատ էվեպերթիկ եմ բռնել ու թերթին տվել... այ ես է մեր օրը կամ էլ 2 ամսվա «Փառոսի» փողն իրեն պիտի տաս, այդ ամբողջ օգնությունն իրենց փորն են լցնում: Այ հենց իշխանափոխություն լինի, ես եղած-չեղածս կծախեմ ու երկու ցուլ կմորթեմ, որ ուրածիս սրանցից ու վերջ»:

Անժելա Հարությունյանն էլ նշեց, որ Չարենցավանի հատուցաշինական գործարանը փակել են, որտեղ Սերժ Սարգսյանի եղբայրը սեփականացնի ջրի գնով, ու 2 հազար աշխատողների դուրս են վռնդել:

Աժ պատգամավոր Վիկտոր Դալլաքյանը նշեց, որ հանդիպումները ցույց են տալիս, որ «դարաբաղյան կլանի տաղալումն ակնհայտ է, եւ դա պետք է իրականացնենք ձեզ հետ միասին, ձեր հավաքական կամքով եւ ձեր դեմ խաղ չկա»: Բոլոր ելույթ ունեցողները պահանջում էին երկիրն ազատել «օկուպացիոն ռեժիմից» եւ նշում էին, որ «ժողովուրդը տուռնիկ չէ, որ ֆոացնի ու ոչ էլ սառույց, որ լիժա ֆշի»:

ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճյանն էլ շեշտեց, որ եթե իշխանությունները փորձեն ուժային կառույցներով վախեցնել, չի սացվի, մեր զավակները մեր դեմ չեն կրակի: Իրենք են հոգեվարքի մեջ ու չգիտեն ինչ անեն, հիմա էլ պատրոնափոխություն են անում, որ իրենց պատժեն: Թող լավ իմանան, փորձեց մարգարեանալ Պրն Դեմիրճյանը, որ մինչեւ ապրիլի 10-12-ը Հայաստանը սահմանադրական ճանապարհով կազատագրվի դարաբաղյան կլանից առանց ցնցումների եւ ավելացրեց, որ ժողովուրդը պահակ չէ բալանչիների աղուսին... Հանդիպումն ավարտվեց, ու ժողովուրդը ողջույններով ու բացականչություններով մինչեւ մայրուղի ուղեկցեց հյուրերին, պահանջելով արագացնել բոլոր գործողությունները:

Սոցիալական հարցերը՝ մեր գլխին պատուհաս

Սկիզբը էջ 1

Այսպես, «ԱԼՄ» հեռուստաընկերության նախագահ Տիգրան Կարապետյանի կարծիքով, անընդունելի է մեր անօրեն պետության մեջ անհատի մասին կենսրոնացված տվյալներ հավաքելը: Խալիկ Սամբոլցյանը կառավարությանը կոչ արեց ուշի գալ եւ հրաժարվել 9 միլիոն դոլարից, որն ազգի մահվան կերակուր է: Նա վստահաբար հայտարարեց, որ հուլիսի 1-ից օրենքը կյանք չի մտնի, եւ դրա կիրարկման ժամկետը կհետաձգվի մինչեւ եկող տարի: Վերջապես խոսքը հասավ պրն Ասատրյանին, որն ամեն ջանք գործադրեց աղացուցելու համար, թե օրենքը ոչ մի վտանգ չի ներկայացնում մեր երկրի ու հասարակության համար, որ հարցերի միջոցով հնարավոր է դառնում հրաժարվել քաղաքացիներից տարբեր տեղեկանքներ հավաքելուց, որ տեղեկատվական բազաներ այսօր էլ կան բոլոր առեւտրականների, գործազուրկների եւ այլոց համար: Նա հակառակ կողմին մեղադրեց ժողովրդին քյուրիմացության մեջ գցելու եւ ավելորդ լարված մթնոլորտ ստեղծելու համար: «Պետք չէ հանճարեղ ձեւանալ եւ պայծառատեսի տեսք ընդունել: Այս համակարգի անհրաժեշտությունը միանշանակ է, մեզ հակառակվողները միանշանակ քյուրիմացաբար կարծում են, որ օրենքը չի գործելու, իսկ ես միանշանակ հայտարարում եմ, որ օրենքը գործելու է», ասաց նա: Ուշագրավ էր հատկապես մի քաղաքացու կարծիքը, որը սոցիալական հարցերի ընդունումը համարեց չափազանց վտանգավոր, իբրեւ փաստարկ բերելով հավատացյալների հուսալքությունը եւ շատերի հայրենիքից հեռանալու հաստատակամությունը, միաժամանակ շեշտելով, որ նոր-նոր կնքեսապես ոտքի կանգնած Հայաստանում ստեղծվում է բարոյական անմոտաս մթնոլորտ:

Մի խոսքով, երկար վիճաբանություններից ու հուզումնալից ելույթներից հետո հանդիպումն ավարտվեց «Օգոստոսի 23» կազմակերպության ղեկավար Պուշկին Սերոբյանը, որի խոսքը գերազանցապես առնչվեց օրենքի անկատարությանը: Նա դիտարկմամբ, օրենքում կան լուրջ կննոտս կետեր, որոնք հիմնավոր կասկածների տեղիք են տալիս, ինչը խոսում է այն մասին, որ օրենքը հնուս իրավաբանի ձեռքով չի անցել: Նա առաջարկեց օրենքը վերստին դնել քննարկման՝ նոր լրացումներ ու փոփոխություններ կատարելու նպատակով:

Խնդիր

Վերնիսաժի բոմժը

Այս պատկերը երեւանի կենտրոնական մասում՝ Հանրապետության հրապարակին մերձ Վերնիսաժի այգում է լուսանկարվել: Որեր շաունակ պատկերված կինն այս վիճակում է գտնվում:

Դիմացի շենքի բնակիչներից փորձում են գուցել հետը, սակայն՝ ապարդյուն, նա չի խոսում: Մի ժամանակ այս կինը մուրացկանություն էր անում, բայց հարբեցողությամբ չի զբաղվել: Վերջերս ընկել, ոտը վնասել է: Այսպես շաբաթներ նա գրեթե անշարժ գտնվում է այս աղբակույտային միջավայրում: Անցորդները կամ դիմացի շենքերի բնակիչները սնունդ են կողմին դնում, հաց, ջուր: Երբեմն թույլ շարժումներն այս գրեթե անշունչ մարդկային գոյության կենդանության մասին են վկայում:

Քաղաքի այս վայրը հայտնի է իր աղբակույտերով, այստեղ բոմժերի կուտակումներ միշտ էլ կան, բայց այս կինը շաբաթներով այսպես ընկած է, ուշադրություն դարձնող չկա: Նա չի կարողանում ֆայլել, շարժվել, սրա հետեւանքներն ինչ կարող են լինել: Այգու դիմաց ՀՀ Ֆինանսների նախարարության, իսկ մի փոքր ներքեւ՝ ՀՀ կառավարության շենքերն են: Այստեղ վաղուց մշակվել եւ փորձում են իրագործել աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը, մինչ երեւանում բոմժերն ու մուրացկանները հետզհետե շատանում են, հոգեկան խախտումներով մարդիկ նույնպես: Նրանցից ոմանք այսպիսի ծանրացիր են ունեցան գարշահոտությունը, մահրել թողած հետքերը: Հատկապես կանայք եւ երեխաները վախենում էին, երբ ալկոհոլի ազդեցությամբ տղամարդն ավելի շատ օրհնանք էր դառնում:

Նրանք հաճախ խմբերով հավաքվում են կաթսայատներում՝ դպրոցների կամ բնակելի շենքերի մոտ՝ «աղբուսը» հայթայթում աղբակույտերից: Շրջակա բնակիչները վկայում են, որ նրանց գոյությամբ շատացել են մանր գողությունները:

Մայրաքաղաքում գործո՞ւմ է արդյոք որեւէ ծառայություն քաղաքաշեջարանում կամ սոցապ նախարարությունում, որ զբաղվի կյանքի հատակն ընկածներով՝ դուրս բերելու նրանց այս վիճակից: Գուցե քաղաքի ոստիկանությո՞ւնը զբաղվի նրանցով:

Մ. ԲԱԳՐԱՏՅԱՆ

Քաղաքական դաշտում բոմժի հոգեբանությունը վտանգավոր է

Սկիզբը էջ 1

Տեղական ինքնակառավարման շարածում այսօր ուշագրավ փոփոխություններ են կատարվում՝ մասնավորապես գույքահարկը եւ հետագայում նաեւ այլ գործառույթները համայնքներին փոխանցման դաշտում: Ռոբերտ Քոչարյանի այցելությունը հենց կենսրոն եւ ոչ այլ համայնք, բացատրվում է այն հանգամանքով, որ մեծ բարեփոխումը բոլոր մանրամասներով սկսվել է այստեղից: «Ակնհայտ է, որ պետք է գնալ աղակենտրոնացման ճանապարհով: Մենք վարկային ծրագրեր պետք է բերենք լուծելու ջրի, լոկալ ջեռուցման, բնակֆոնդի հարցերը, բայց դրանց վերաբերյալ լիազորությունները անցայման փոխանցելով տեղական ինքնակառավարման օրակներին: Դրանք պիտի ամրանան, որովհետեւ ժողովրդին ավելի մոտ են: Կառավարությունը մարդկանց կենցաղի հետ գործ չունի: Եթե մի տեղ կենցաղային ինչ-որ խնդիր կա, մարդիկ չպետք է մտածեն նախագահի կամ վարչապետի մասին, դրանով պետք է զբաղվեն տեղական իշխանությունները», այսպես բանաձեւեց ՀՀ նախագահը այս ոլորտում պետական քաղաքականության էությունը: Կայացման ու հզորացման հույսեր են կապվում նաեւ ավագանիների ինստիտուտի հետ, որը համայնքային բյուջեն է կազմելու, վերահսկողություն իրականացնելու՝ կատարելով յուրօրինակ պառլամենտի դեր:

Լիազորությունների տեղաշարժը, իհարկե, հետաքրքրական է, բայց խաղաղ չի ընթանում՝ հարուցելով այն գերատեսչությունների դժգոհությունը, որոնք զրկվում են դրանցից:

Գույքահարկի իրավասությունների փոխանցումը արդեն իսկ առաջին պտուղները տվել է: միջոցառման կիրառումից ի վեր կենսրոն համայնքի բյուջեն կրկնապատկվել է:

Ողջ երեւանն ընդգրկած կառուցապատումները, որոնց մեծ մասն իրականացվել ու իրականացվում է նախագծային կոպիտ խախտումներով, երեւանի քաղաքապետարանի ուշադրության կենտրոնում է մշտապես: Մենք անցնում ենք այսպիսիների կողքով, ուշադրություն իսկ չենք դարձնում, մոռանում ենք, որ նրանք էլ մեզ նման մարդ-էակներ են: Պատկերներն ազդեցիկ են, հոգեբանորեն ծնող, նորմալ հասարակության համար խոցելի:

Երեւանի որոշ շենքերի բնակիչներ սկսել են անհանգստանալ այս երեւույթով, որովհետեւ բոմժերից մի մասն ապաստանում է շենքերի շքամուտներում կամ վերին հարկերի միջանցքներում: Նրանցից մեկը վերջերս օբելուսկ էր կապյան 4 հասցեի 5-րդ հարկում եւ իր «սեփականաշնորհած» տարածքն օգտագործում էր սեփական բնակարանի պես: Հարկի բնակիչները ստիպված էին

Հաղթական հարված ահաբեկչությանը

Ամերիկյան զորքերը Իրաքում ամենամեծ հարվածն են հասցրել ահաբեկչությանը: Ամերիկյան զորքերի հրամանատարությունը հայտարարել է, որ Ֆալլուջայում ռմբակոծությունների ընթացքում ոչնչացվել է ահաբեկչական խմբավորման ղեկավարներից մեկը՝ Ամջադ Հուսեյնը: Ռմբակոծությունների ընթացքում ոչնչացվել է նաեւ ահաբեկչական խմբավորման մի շարք այլ ղեկավարներ: Ամերիկյան զորքերի հրամանատարությունը հայտարարել է, որ Ֆալլուջայում ռմբակոծությունների ընթացքում ոչնչացվել է ահաբեկչական խմբավորման մի շարք այլ ղեկավարներ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 79 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լրագրողների սենյակ
/ հեռ. 581841
Համակարգ. ծառայություն
/ հեռ. 582483
Apple Macintosh
համակարգչային շարուածք
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական կամ մասնակի արտատպումները տրագիր համոզի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են. համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրենքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ Ազգային

«Երկիր» ամրապնդում է հայրենիքի սահմանները

Լիբանանահայ Սեւակ Արծրունին 1994 թ. եկել է Հայաստան եւ իր նման մի ֆանի խանդավառների հետ իրականացնում է ծավալով փոքր, բայց էությամբ շատ կարեւոր ծրագրեր. Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի սահմանային շրջանների համայնքների բնակեցում, վերաբնակեցում:

Սեւակ Արծրունին «Երկիր» միության գործադիր տնօրենն է: Հասարակական այս կազմակերպությունը ստեղծվել է մոտ 1 տարի առաջ եւ ներառում է 5 կազմակերպությունների, որոնց ուղենիշը Հայաստանի սահմանամերձ շրջանների եւ Լեռնային Ղարաբաղի վերաբնակեցումն է: «Պատերազմները կանխվում են սահմանների ամրապնդման միջոցով», ասում է Արծրունին:

Առդեն աորիլին Հայաստանից 35 խիտս անառպահով ընտանիքներ տեղափոխվելու են Լեռնային Ղարաբաղ: «Երկիր» միության ծրագրերն ուղղված են ինչպես արդեն վերականգնված բնակավայրերի բնակիչների սոցիալ-տնտեսական եւ մշակութային խնդիրների լուծմանը, այնպես էլ Արցախի հայաթափված եւ դեռ չվերաբնակեցված բնակավայրերի ամբողջական վերականգնմանը:

Մեկ տարվա ընթացքում «Երկիր» իրականացրել եւ ավարտել է երեք փոքր ծրագիր. Ֆրանսահայ Շառլ Ղազերյանի հովանավորությամբ Հադրութի շրջանի Առաքեւ գյուղում կառուցվել է դպրոց, ԱՄՆ-ից Պոյաճյանների ընտանիքի հովանավորությամբ Հադրութի Առաֆյուլ գյուղում կառուցվել է մանկապարտեզ եւ կահավորվել, ինչպես նաեւ Լոս Անջելեսի մի խումբ հայերի հովանավորությամբ Շահումյանի շրջանի Ծար գյուղում հիմնովին վերակառուցվել եւ կահավորվել է դպրոցի շենքը:

Այսօր «Երկիրը» իրականացնում է եւս 12 փոքր, սակայն սահմանների պահպանության համար խիտս կարեւոր ծրագրեր: Այս տարվա ընթացքում Հադրութի շրջանի Առաքեւ գյուղը կունենա հիվանդանոց, Նորաշենը՝ բնակելի 5 նոր տներ, բուժկետ, Սարալանջը՝ բնակելի 8 տներ, Հայկավանը՝ բուժկետ, նոր դպրոց եւ բնակելի 8 տուն, կվերանորոգվի Ծամծոր գյուղի դպրոցը: Մարտակերտի Թալիշ գյուղը կունենա մանկապարտեզ, Նոր Շահումյանի շրջանի Քնարավան գյուղը՝ 18 նոր տուն, դպրոց, բուժկետ, եղեգնուտը՝ մանկապարտեզ...

Կազմակերպությունը, ինչպես նշում է Արծրունին, իր ծրագրերն իրականացնում է ախտարհագրական երկու հիմնական ուղղություններով. 1. Հայաստանի հյուսիսարեւելյան եւ հարավային սահմանամերձ շրջաններ՝ Տավուշի, Վայոց եւ Սյունիքի մարզեր, Գեղարքունիքի մարզի արեւելյան հատված, 2. ԼՂՀ Հադրութի, Մարտունու, Մարտակերտի եւ Նոր Շահումյանի շրջանների սահմանային բնակավայրեր: Արծրունու ասելով, 2004 թ. համար սփյուռքահայ տարբեր կազմակերպություններ, անհատներ արդեն իսկ ավելի քան 400 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ նոր ծրագրերի ֆինանսավորման գրավոր համաձայնություններ են տվել:

«Երկիրն» իր առջեւ դրված հիմնական խնդիրներից կարեւորագույնն է համարում հայրենադարձությանն աջակցելը: Կազմակերպությունն սկսել է ներկայումս Ռուսաստանում եւ ԱՊՀ այլ երկրներում բնակվող ու Հայաստան եւ ԼՂՀ վերադառնալ ցանկացող մեր հայրենակիցների հաշվառումը: Վերաբնակեցվող գյուղեր վերադառնալու առաջնահերթ իրավունքը պատկանում է նախկինում այնտեղ բնակված ընտանիքներին, որոնցից շատերը տանելի պայմանների դեպքում պատրաստ են վերադառնալու հարազատ օջախները:

Ե. Ա.

Արդյունաբերողներն ու բանկիրները գործելու են համատեղ

Երեկ Հայաստանի գործարարությունը ներկայացնող երկու խոշորագույն հասարակական կազմակերպությունները՝ Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միությունը (ՀԱԳՄ) եւ Հայաստանի բանկերի միությունը (ՀԲՄ) համագործակցության համաձայնագիր ստորագրեցին:

Կարեւորելով արդեն 8 ամիս շարունակվող համատեղ միջոցառումների կազմակերպումը եւ համագործակցության մյուս դրսեւորումները, ՀԱԳՄ նախագահ Արսեն Ղազարյանը կարծիք հայտնեց, որ համաձայնագրի ստորագրումն այս առումով անգամ ուշացած կարելի է համարել: Նա բանկային համակարգը համարեց Հայաստանի տնտեսության ամենակայացած ենթակառուցվածքը: Արսեն Ղազարյանի հավաստմամբ, երկրի տնտեսության թռիչքային զարգացումն անհնար է առանց բանկերի: «Բանկերից պետք է սովորենք եվրոպական մենեջմենտ, բանկերի շնորհիվ պետք է հարվածենք ստվերային տնտեսությանը եւ խաղախկրվենք», ասաց նա:

ՀԲՄ նախագահ Սամվել Ճգմայանն իր հերթին համաձայնագիրը կարեւոր համարեց ոչ միայն արդյունաբերողների, այլեւ բանկերի համար: Նրա կարծիքով, միայն համատեղ աշխատանքով հնարավոր կլինի տնտեսական աճ ապահովել: Սամվել Ճգմայանն ընդգծեց, որ, օրինակ, հիպոթեկային վարկավորման շնորհիվ կզարգանա ինչպես շինարարությունը, այնպես էլ շինանյութերի արդյունաբերությունը:

Հայաստանում գործարարության զարգացման համար Արսեն Ղազարյանը անհրաժեշտ համարեց նաեւ ապահովագրության համակարգի կայացումը, ինչը հնարավորություն կտա ապահովագրել վարկերը եւ մեծ ներդրումներ ներգրավել:

«Ազգի» հարցը երկու միությունների նախագահներին վերաբերում էր բիզնեսի մասնակցությանը սոցիալական ծրագրերի իրականացմանը: ՀԱԳՄ նախագահ Արսեն Ղազարյանը պատասխանեց, թե գլխավոր նպատակն այն է, որ գործարարները օրինապահ հարկատուներ լինեն, որպեսզի պետությունը կարողանա իրականացնել սոցիալական ծրագրերը: Եթե գործարարներին ներկայացնող երկու միությունները կարողանան նպաստել ստվերային տնտեսության ծավալների նվազմանը, ապա դա ավելի շատ կնպաստի սոցիալական խնդիրների լուծմանը, ֆան եթե գործարարը որոշակի բարեգործություններ կատարի, բայց խուսափի հարկեր վճարելուց:

Սամվել Ճգմայանը համաձայնելով իր գործընկերոջ արտահայտած տեսակետին, ավելացրեց, որ սոցիալական ծրագրին նպաստելու տարբերակ կարելի է համարել հիպոթեկային վարկավորումը: Եթե իշխանությունները օգնեն երկարաձգել միջոցների ներգրավման առումով, ապա այստեղ լուրջ հաջողություններ կարելի է ակնկալել: Արսեն Ղազարյանն էլ նշեց, որ երկարաժամկետ փողերի առաջացմանը կարելի է նպաստել նաեւ մեր գումարները հայկական, այլ ոչ թե օտարերկրյա բանկերում ներդնելով: Նա նաեւ հիշատակեց վերջերս ՄԱԿ-ի կազմակերպած սեմինարը նվիրված բիզնեսի ուղղվածությանը սոցիալական ծրագրերին, ասելով, որ Հայաստանի խոշոր գործարարները կմասնակցեն դրանց:

Հայաստանյան բանկերից մեկի՝ Հայգյուղփոխօգնության բանկի գլխավոր տնօրեն Ստեփան Գիշյանը սոցիալական խնդիրներին բիզնեսի մասնակցության օրինակ համարեց հեռավոր եւ սահմանամերձ գյուղերին իրենց տված վարկերը, ասելով որ այդպիսի բանկերը մշտապես անում են, բայց չեն գովազդում:

Շարունակելով բանկային համակարգի մասին կարծիքներ փոխանակելը, Արսեն Ղազարյանը նշեց, որ Հայաստանում այլեւս չեն մնացել ոչ վստահելի բանկեր, ինչին Սամվել Ճգմայանն ավելացրեց, որ անբարեխիղճ բանկերի ժամանակն անցել է:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Եվրոպական միության ծրագրերը Հայաստանում

Արդյունավետ աշխատանք ապահովելու եւ տվյալ երկրի առաջնահերթ խնդիրները հստակեցնելու նպատակով Եվրամիությունը հակված է ավելի մեծ ներկայություն ունենալու գործընկեր երկրներում: Այս մասին երեկ «Կոնգրես» հյուրանոցում տեղեկացրեց Վրաստանում եւ Հայաստանում եվրոպական հանձնաժողովի պատվիրակության գործողությունների ղեկավար Ադրիանա Լոնգոնին: Վերջինս կարեւորեց «Գործընկերություն եւ համագործակցություն» համաձայնագիրը, որը հնարավորություն է տալիս Հայաստանի օրենսդրությունը ԵՄ օրենսդրությանը ներդաշնակեցնելու: Կարեւորվեց նաեւ ԱՊՀ երկրներում իրականացվող TACIS ծրագիրը, որը ներառում է տարբեր երկամյա ծրագրեր: Դրանցից հերթականը ՀՀ կառավարության հետ համաձայնեցվել եւ հաստատվել է մեկ տարի առաջ՝ մինչեւ 2006-ն իրականացնելու ժամանակացույցով: Տարածաշրջանային ծրագրերից տկն Լոնգոնին կարեւորեց «Տրասեկան»: Ծրագրի նպատակն է Արեւելքն ու Արեւմուտքը կապող Մեսախի ճանապարհի վերականգնումը, ինչի համար կառուցվելու եւ նորոգվելու են ճանապարհներ, ստեղծվելու են տարանցման կետեր: Վերջին 10 տարիներին եվրամիությունը Հայաստանում իրականացրել են 380 մլն եվրո ընդհանուր բյուջեով ծրագրեր, որոնք շարունակական են եւ իրականացվում են կառավարության հսկողությամբ, վերջերս նաեւ աղետության հաղթահարման ոլորմավարական ծրագրին համահունչ:

ԵՄ-ի կողմից ՀՀ-ում իրականացվող մասնավոր ձեռներեցության զարգացման ծրագիրն ուղղված է անմիջապես անհատ ձեռներեցներին, որոնց տրամադրվում է անհրաժեշտ խորհրդատվություն՝ ձեռնարկության դիրքերի ամրապնդման եւ եկամտաբերության բարձրացման համար: Միաժամանակ ԵՄ-ը վճարում է խորհրդատվության արժեքի մինչեւ 50 տոկոսը: Եվրամիության պարենային աջակցության ծրագիրը Հայաստանում նպատակ ունի աջակցելու անհրաժեշտ ճանապարհով պարենի հասանելիությունն ինչպես պետության, այնպես էլ յուրաքանչյուր անհատի համար: Այս ծրագիրը հիմնականում իրականացվում է գյուղատնտեսության, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունների միջոցով: Պարենային ծրագրերի իրականացման համար 1996 թ.-ից մինչ այժմ ՀՀ կառավարությունը եվրոպական հանձնաժողովից ստացել է 67.0 մլն եվրո դրամաշնորհ:

Ծրագրի շրջանակներում իրականացվում են դրենաժային ցանցերի մաքրում եւ նորոգում, անասունների պատվաստումներ, բույսերի պաշտպանության նպատակով պայքար մորեխների եւ կրծողների դեմ, նաեւ աջակցություններ մանկատներին եւ մանկատների շրջանավարտներին: Կատարվում են գյուղատնտեսական հողատեսքերի քարտեզագրում եւ սեփականության իրավունքի գրանցում: ԵՄ-ն իրականացնում է նաեւ գազի անվտանգ մատակարարման եւ միջուկային էներգիայի փոխարինման ծրագիր:

ԵՄ-ն աջակցում է Հայաստանին հիդրոէներգետիկայի զարգացման ոլորտում: Միջոցառումներ է ձեռնարկում Որոտանի կասկադը նորոգելու եւ գործարկելու, Մեծամորի ատոմակայանի անվտանգությունն ապահովելու համար: Նախատեսվում է նաեւ Աբովյանի սոորգեցնյա գազի պահեստների վերանորոգում՝ պահեստների հնարավորությունները կրկնակի մեծացնելու նպատակով: Իրականացվելու է նաեւ Իրան-Հայաստան փոխադարձ կապի գնահատում՝ գազի անվտանգ մատակարարման համար: Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2005 թ.:

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Դեղոգիստարիան ներկայացրեց իր մատուցած ծառայությունների նոր սակագները

Արժեթղթերի հանձնաժողովում երեկ հրավիրված ճնշարկման նպատակն էր ներկայացնել հանձնաժողովի կողմից կանոնակարգվող «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» կազմակերպության մատուցած ծառայությունների սակագները, լսել առաջարկություններ եւ դիտողություններ դրանց վերաբերյալ:

Անդրադառնալով դեպոզիտարիայի գործունեությանը, ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի նախագահ Էդուարդ Սուրադյանը հայտնեց, որ այստեղ վարվում են 600 ԲԲԸ-ների եւ 337 ՓԲԸ-ների ռեեստրերը: Եթե առաջին դեպքում դեպոզիտարիայում ռեեստրավարումը պարտադիր է, ապա երկրորդների համար նպատակահարմարությունից ելնելով: Էդուարդ Սուրադյանը նշեց, որ երկխոսության նպատակն է, որ բոլոր հրավիրվածները կառավարության, ընկերությունների ներկայացուցիչներն ու հանձնաժողովի անդամները պատկերացում կազմեն, թե որքանով է նպատակահարմար դեպոզիտարիայի ծառայություններից օգտվելը, ինչպես նաեւ լսել այդ կապակցությամբ առկա բողոքները:

«Դիագնոստիկա» ընկերության ներկայացուցիչը այդ կապակցությամբ հայտնեց, որ իր ղեկավարած կազմակերպությունն ընդհանուր առմամբ դրական է գնահատում դեպոզիտարիայի կողմից ռեեստրավարումը: Ինչ վերաբերում է դրա համար առաջարկվող նոր սակագներին, ապա դրանք բարձր չեն, բայց ցածր էլ չեն: Ելույթ ունեցողն առաջարկեց, որ դրանք լինեն խելամիտ եւ որտեղ հնարավոր է նվազեցվեն:

Ինչպես այս, այնպես էլ մյուս ելույթ ունեցողների դիտողությունները, հանձնաժողովի նախագահ Էդուարդ Սուրադյանի հավաստմամբ, կամփոփվեն եւ նկատի կառնվեն սակագների վերջնական ընդունման ժամանակ:

Ա. Մ.

Քաց դռների օր Հայաստանի ամերիկյան համալսարանում

Հայաստանի ամերիկյան համալսարանն ամեն տարի ավանդաբար կազմակերպում է բաց դռների օր՝ համալսարան ընդունվել ցանկացողների համար: Այս տարվա բաց դռների օրը տեղի կունենա այսօր, շաբաթ, մարտի 20-ին, ժամը 11-ին, ՀԱՀ-ի մեծ դահլիճում: Միջոցառման նպատակը նախապես դիմորդներին հանգամանորեն ծանոթացնելն է համալսարանի ընդունելության կարգին եւ պայմաններին: Միջոցառումը մասնակիցներին հնարավորություն կտա հանդիպելու համալսարանի կրթական եւ հետազոտական բաժինների ղեկավարների եւ դասախոսների հետ: Կներկայացվի բաժինների ծրագրերի, հետազոտական կենտրոնների գործունեության մասին: Հանգամանորեն կքննարկվեն ընդունելության ընդհանուր պահանջներն ու կարգը: Ելույթ կունենան ուսումնական ծրագրերի (անգլերենի ուրագացված ուսուցման, համակարգչային ուրագացված ուսուցման ծրագրեր, շրջակա միջավայրի հետազոտման կենտրոն, արդյունաբերական ճարտարագիտություն եւ համակարգերի կառավարում, գործարար ղեկավարում եւ այլն) ղեկավարները:

30 րոպեանոց ընդմիջումից հետո դիմորդները կարող են իրենց հանդիպումը շարունակել առանձին լսարաններում եւ իրենց հետաքրքրող համապատասխան ծրագրերի ղեկավարների հետ ավելի հանգամանալի զրույց ունենալ, սանալ իրենց հարցերի պատասխանները:

Միջոցառման մասնակիցներին կտրվի հնարավորություն այցելելու գրադարան, համակարգչային լաբորատորիա եւ տարբեր հետազոտական կենտրոններ, նրանց կտրամադրվի նաեւ տեղեկություններ ինչպես համալսարանի հիմնադրման պատմության, կարեւոր իրադարձությունների եւ կրթական ծրագրերի մասին:

Մ. Բ.

ԱԶԳ

Հրատարակություններ

«Ես եկա եւ հանդիպեցի Հայաստանին»

Իտալացիներ Հայաստանում

Գրասենյակը, ուր տեղավորված է «Հոգ ընտանիին» միջազգային բարեգործական կազմակերպությունը, ավելի շատ ազգագրական թանգարանի տպավորություն է հիշեցնում: Հին հայկական կարպետներ, գորգեր, նավթավառ ու կախույքի բաղադրամասեր, անտաճույճ, անզարդ պատեր: Շենքը կառուցվել է 1906 թվականին, եւ կազմակերպության տնօրենը, Գյումրիում Իտալիայի պատվավոր հյուպատոս Անտոնիո Մոնտալտոն ամեն կերպ ափսոսել է անխաթար պահել հին ժամանակների ներկայությունը հաստատության պատերի ներսում:

Անտոնիո Մոնտալտոն արդեն 15 տարի Հայաստանում է: Նա ծնունդով Սիցիլիայի Պալերմո քաղաքից է, մասնագիտությամբ բժիշկ-թերապեւտ: Ընտանիքն ապրում է Հռոմում, իսկ ինքը Հայաստանում հայտնվեց երկրաշարժից անմիջապես հետո եւ սիրելով այս երկիրը, նրա հետ արդեն այն բոլոր դժվարությունները, որոնք բաժին ընկան հետխորհրդային ժամանակաշրջանին: Այժմ էլ կազմակերպությունը Ղարաբաղին ու Հայաստանին հումանիտար օգնության մեծ ծրագիր է իրականացնում ուղղված մոր ու մանկան առողջության պահպանման խնդիրներին: Վերանորոգում են ծննդատները, ամբուլատորիաները, կահավորում սարքավորումներով, օժանդակում դեղորայքով եւ վերապատրաստում բուժանձնակազմին: Ղարաբաղում գրեթե 100 տոկոսով ծնունդներն ընդունում են կազմակերպության վերակառուցած ծննդատներում: Նույնօրինակ բուժհաստատություններ են նորոգվել նաեւ Մարտունիում, Գորիսում, Մարալիկում, Արթիկում ու Փանիկում: Այլ մարզերում դրանց թիվը հասնում է շուրջ 3 տասնյակի: Կազմակերպությունը համագործակցում է նաեւ Երեւանի պերինատոլոգիայի, մանկաբարձության եւ գինեկոլոգիայի ինստիտուտի հետ: Մեկ այլ ծրագրով Սոխակում արվեստի դպրոց է հիմնվել: Երեխաներն ու կանայք գեղարվեստական կրթություն են ստանում, տիրապետում ազգային կիրառական արվեստի տեսակներին: «Հոգ ընտանիին» օգնում է նաեւ, որ ուշագրավ աշխատանքները վաճառվեն արտերկրում: Ի դեպ, գրասենյակի հնաոճ թախտի ասեղնագործ բարձերը եւս դպրոցի աշակերտների ձեռքի գործն են:



– Ի՞նչ խնդիր ունի Գյումրիում Իտալիայի գլխավոր հյուպատոսը, պարոն Անտոնիո, Հայաստանում վաղուց Իտալիայի դեսպանատուն կա:

– Դա ավելի շատ պատվավոր կոչում է, քան աշխատանք: Թեեւ ֆիզ թվով, սակայն Հայաստանում աշխատող ու աշխատող իտալացիներ կան: Ես երկար ժամանակ այստեղ եմ եւ քանի որ ավելի լավ եմ ծանոթ իրավիճակին, նրանց հոգսերն ու խնդիրները հասցնում եմ դեսպանատուն: Անելիքս դեսպանատան աշխատանքը հեշտացնելն է:

– Ի՞նչն է կարում ձեզ Հայաստանի հետ, նույն նպատակով շատերն են եկել այստեղ եւ առաքելությունն իրականացնելուց հետո վերադարձել հայրենիք:

– Դժվար է ասել: Ինչպես է լինում, որ մեկը հանդիպում է աղջկա կնոջը կամ ամուսնում եւ ընտանիք կազմում: Ես եկա այստեղ եւ հանդիպեցի Հայաստանին: Կյանքում շատ հանդիպումներ են լինում, գլխավորը դրանց իմաստի ու հնարավորությունների օգտագործման ձեւն է:

– Հայերը նման՞ են իտալացիներին:

– Իտալիան մեծ երկիր է, տարբեր գավառներ տարբեր ավանդություններ ու սովորություններ ունեն: Բայց կա մի բան, որ անկախ ամեն ինչից միավորում է այս 2 ժողովուրդներին երկուսն էլ հրճստոնյա ազգ են: Կարող եմ նաեւ ասել, որ հարավային մասը, հատկապես Սիցիլիան, շատ ընդհանրություններ ունի Հայաստանի հետ: Նույն լավ եւ նույն վատ բաները: Ինչպես Հայաստանում, իտալացիներն էլ զգացմունքային են: Սիցիլիայում էլ մարդկանց խմբեր կան, որոնք վախենում են պրոբլեմները միայնակ լուծել եւ կլաններով են արդում ու գործում: Հայաստանում էլ այդպիսի միտում կա: Բայց ամեն մարդ անհատականություն է եւ պիտի անհատապես դիմադրի պրոբլեմներին: Ամեն մեկը իր անձնական պարտականություններն ունի եւ պիտի կարողանա միայնակ կրել պատասխանատվության իր բաժինը: Ես Հայաստանում մենակ եմ եւ մենակ եմ լուծում իմ հոգսերը:

– Գրասենյակի հետ կապված դուք խնդիր ունեք քաղաքային իշխանությունների հետ, որի մասին գրեց նաեւ մամուլը (կազմակերպությունը տեղավորված է Երեւանի կենտրոնի՝ եզնիկ Կողբացի հատվածում): Ինչպե՞ս եք վերաբերվում դրան:

– Նորմալ: Օրենքը բոլորի համար է, եւ այդ շրջանակներում պիտի լուծվի նաեւ իմ խնդիրը: Պարզապես իբրեւ սեփականատեր, օրենքի անկատարություններ: Խորհրդային մտածողության ավանդությամբ դեռ ամուր է այն ընկրկունը, թե որքան խոշոր լինի ծննդատունը կամ հիվանդանոցը, այնքան լավ: Բայց այսօրվա պայմաններում, երբ գազի, հոսանքի վճարումների, մահճակալային զբաղվածության խնդիրներ կան, այդ մոտեցումն արդեն սխալ է: Ավելի լավ է ունենալ փոքր, բայց նորմալ տաքացվող ու կահավորված ծննդատուն: Նույնիսկ վիճակ է նաեւ կադրերի հարցում: Խորհրդային տարիներին հազարավոր մարդիկ աշխատում էին, բայց հիմա աշխատում եւ վարձատրվում անհամեմատ ավելի շատ: Ես գտնում եմ, որ ավելի լավ է աշխատանքի վերցնել այն մարդկանց, որոնք կարող են արդյունավետ աշխատել, եւ որոնց կկարողանանք լավ վճարել: Ինչ վերաբերում է բուժանձնակազմի որակին, հայ մասնագետները մեծ ներուժ ունեն, բայց որպեսզի այն լավ օգտագործվի, անհրաժեշտ են գումարներ եւ գրագետ մենեջմենթ: Այնուամենայնիվ, անկախ ամեն ինչից, իմ համոզմամբ, Հայաստանը ոչ թե զարգացող, այլ զարգացած երկիր է:

– Ինչո՞վ բացատրել այս տարիների զուտ հայկական եւ ավանդական մթնոլորտը:

– Սա հարգանք է Հայաստանի եւ այն մարդկանց հանդեպ, որոնք աշխատում ու այցելում են այստեղ: Ես հարգում եմ այս երկիրը, որ քարի է եղել իմ նկատմամբ:

Աշխարհն ավելի փոքր է, քան թվում է, եւ ամեն մարդ պիտի ջանա հնարավորինս շատ բան անել, որ այն լավ դառնա: Ամեն ազգ իր ձեւով, ամեն մեկը յուրովի: Սա էլ իմ անելիքն է:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ֆրանսահայ միասեռականները վիրավորվել են «Ազգից»

Հայկական մամուլում թերեւս առաջին անգամն է, որ հայ միասեռականները հանդես են գալիս պատշաճաչափ: Ստորեւ նույնությամբ հրապարակվող նամակը խմբագրությունս ստացել է «Ֆրանսիայի հայ գեյերի եւ լեզբուհիների ասոցիացիայից», եւ վերաբերում է Մոսկվայի մեր թղթակից Ռուբեն Հայրապետյանի ստորագրությամբ «Ազգում» լույս տեսած «Ընդդեմ երկնագույն վարակի» վերնագրով հոդվածին: Անշուշտ, միասեռականները, Հայաստանում թե սփյուռքում, պիտի դժգոհ լինեին այդ հոդվածից, որը մատնացույց էր անում Ռուսաստանում միասեռականության եւ ընդհանրապես սեռական շեղվածությունների համար ստեղծված արհեստական պատճառներն ու միջավայրը, որի նպատակը ռուսաստանյան նոր սերնդի այլասերումն է: Ռ. Հայրապետյանը հենց այդ այլասերման վտանգից է մեզ զգուշացնում, նկատի ունենալով հեռուստատեսությամբ եւ այլ միջոցներով ռուսական միջավայրի ու բարքերի ազդեցությունը հայաստանցիների վրա: Հետեւաբար մենք ոչ միայն չենք արգելելու նման հոդվածների հրապարակումը, ինչպես ֆրանսահայ միասեռականներն են պահանջում, այլեւ, ընդհակառակը, փաթաթելու ենք, քանզի համոզված ենք դրանց անհրաժեշտությանը: Ինչ վերաբերում է ստորեւ լույս տեսնող նամակին, կարծում ենք, որ միասեռականներն էլ, ինչպես յուրաքանչյուր մարդկային էակ, որքան էլ որ ի ծնե կամ արհեստականորեն շեղված լինի, իրավունք ունեն կարծիք արտահայտելու:



Փարիզ,
Փետրվարի 29, 2004

Հարգելի խմբագիր,

Այս նամակով արտահայտում ենք մեր վիրավորանքը 2004 թ. հունվարի 16-ին **«Ազգ»**-ում տպագրված «Ընդդեմ երկնագույն վարակի» հոդվածի պարունակության վերաբերյալ: Մեր խումբը պարզապես վրդովված է պրն Ռուբեն Հայրապետյանի մեկնաբանություններից:

Մենք ներկայացնում ենք Հայ միասեռականների հասարակական ասոցիացիան, որը միավորում է Ֆրանսիայի հայ տղամարդ եւ կին միասեռականներին, ինչպես նաեւ բիսեքսուալներին ու տրանսգենդերներին: Մեր կազմակերպությունը հիմնադրվել է 2001 թ. Եվրոպական հայ համայնքներում համասեռականների խնդիրների մասին գիտակցության բարձրացման նպատակով: Հայ գաղութներում **«Ազգ»** օրաթերթը Հայաստանի իրականության հաղորդման աղբյուրներից մեկն է:

Վերը նշված հոդվածը ներկայացնում է Ռուսաստանի մամուլից վերցված տեղեկություններ: Սակայն այդ տեղեկությունները ոչ թե պարզապես (միամտորեն) ներկայացված են, այլ պարունակում են խիստ հոմոֆոբիկ տերմինոլոգիա ու հեղինակի (Ռուբեն Հայրապետյանի) արտահայտած ուղղակի ատելությունը դեպի միասեռականները, փոխանակ տալու օբյեկտիվ գնահատական ու տեղեկությունների վերլուծություն: Օրինակ՝ ներկայացված գիտական «փաստերը» անհիմնավոր են եւ չունեն որեւէ պատճառաբանություն: Հեղինակը մեջբերում է ոմն ռուս բժշկի կարծիքը, որի ենթադրությունները հիմնված են ինչ-որ ժամանակակից կլինիկական փորձերի ու հետազոտությունների վրա: Չարժե նույնիսկ նշել, որ այդ ենթադրությունները անհեթեթ են, քանի որ Աշխարհի առողջապահության կազմակերպությունը (World Health Organisation), որին անդամակցում է նաեւ Հայաստանը, դեռեւս 1991 թ. հեռացրել է միասեռականությունն իր ախտերի ու մտային խանգարումների օրենսգրքից:

Հեղինակը փորձում է տարածել հոմոֆոբիա տարբեր միջոցներով: Օրինակ՝ նա միասեռականությունը վերածում է քաղաքական հարցի եւ ընթերցողին համոզում, որ Ռուսաստանում միասեռականների ի հայտ գալը Արեւմուտքի դավադրություններից մեկն է: Հեղինակի մտքով չի՞ անցնում արդյոք, որ ներկայումս Ռուսաստանում միասեռականների առավել ազատության պատճառներից մեկն այն է, որ անցյալ տարիներին Սովետական Միության օրոք, նրանց անհեթեթորեն բանտարկում էին: Նմանապես կարելի է հերքել նրա արգումենտները ՉԻԱՀ-ի վերաբերյալ, որտեղ ընթերցողին առաջարկվում են կարծիքներ, թե միայն միասեռականներն ու ներերակային թմրամիջոցներ օգտագործող անձինք են վարակվում ՉԻԱՀ-ով: Տեղյա՞կ է արդյոք հեղինակն այն փաստին, որ համաճարակի առավելագույն տարածված վայրերում ոչ թե միասեռ, այլ հակասեռ հարաբերություններն են ներկայացնում հիմնական պատճառը:

Հեղինակը հեգնորեն նշում է, որ բանակում ծառայության ժամանակ միասեռ տղամարդիկ պարտավորվում են թաքցնել իրենց սեռականությունը, քանի որ հաճախակի ենթարկվում են հարձակումների եւ նույնիսկ սպանվում են: Սա իրականություն է: Չի՞ գիտակցում հեղինակն արդյոք, որ նման հոդվածները («Ընդդեմ երկնագույն վարակի») ծառայում են որպես կրկնակի ատելության դիսեմինացիա, հրահրելով շարունակական հանցագործություն բանակում եւ այլուր:

Մենք տանում ենք բազում էլեկտրոնային նամակներ Հայաստանի միասեռականներից, ովքեր հաղորդում են խտրականության անսպառ դեպքերի մասին: Նրանք դեռ տառապում են ոսիկանության հարուցած շանտաժի ու գումարաշորթության հետեւանքներից եւ անպատժան են փողոցներում կատարվող բռնությունների ժամանակ:

Չնայած Հայաստանի կատարած առաջադեմ քայլերին դեմոկրատական հասարակություն ստեղծելու ուղղությամբ, որտեղ յուրաքանչյուր քնակչի կրնծեռվեն հավասար մարդու իրավունքներ, մենք գտնում ենք, որ նման հոդվածներն աղավաղում ու ենթագիտակցում են հասարակական կարծիքը, եւ դա անընդունելի է: Նմանատիպ հոդվածները միայն տարածում են ատելություն, խտրականություն եւ բռնություն:

Մենք հուսով ենք, որ Դուք հավատ կառնեք մեր ինքնատպություններ եւ կվերահայեք Ձեր լրագրողի մասնագիտական որակավորումը: Նաեւ հուսով ենք, որ կընծեռեք անհրաժեշտ միջոցներ ապագայում նման հոդվածների լույս ընծայումն արգելելու: Այս նամակի օրինակը հղում ենք նաեւ ասոցիացիայի էլփոստով բաժանորդագրված անձանց ու կազմակերպություններին, ինչպես նաեւ Հայաստանում գտնվող օտարերկյա ներկայացուցիչներին Եվրախորհրդի, ԵԱՀԿ-ի, ՄԱԿ-ի գրասենյակներում եւ հայկական կառավարությանը:

Հարգանքներով

ՄԻՇԱ ՄԵՐՈՒԺԱՆ
ԱԳԱՒ ՓՐՈՒՍՏ-ի նախագահ

ԱԶԳ
Սիջագգային

Սաակաշվիլու ուզածը Բաթումի նավահանգիստն է ու Սարոիի մախսակետը

Սրանցով է հարուստթյուն դիզել Աբաշիձեն

Վրաց-աջարական ճգնաժամը ժամանակավորապես հաղթահարվեց, կողմերը կարողացան խուսափել զինված ընդհարումից: Վրաստանի նախագահը եւ Աջարիայի ինքնավարության առաջնորդը 3,5-ժամյա բանակցությունների արդյունքում հասան պայմանավորվածության, ըստ որի Թբիլիսին վերացրեց Աջարիայի մի քանի օր շարունակվող տնտեսական սահմանափակումները, իսկ Աբաշիձեն խոստացավ կատարել Թբիլիսիի բոլոր պայմանները: Աջարիայում քաղաքական շարժառիթներով ծերբակալված անձինք պետք է ազատ արձակվեն, ընդդիմությանը հնարավորություն տրվի ազատորեն նախընտրական քարոզչություն ծավալել, մարտի 28-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններն անցկացվեն ազատ եւ արդար, հարգվեն մարդու իրավունքները, զինաթափվեն Աբաշիձեին աջակցող կամավորական զինված խմբավորումները:

Այլ խնդիր է, թե կողմերը որքանով հավատարիմ կմնան պայմանավորվածություններին եւ որքան ժամանակ դրանք կաշխատեն: Թբիլիսիում Աջարիայի ներկայացուցիչ Համլետ Ճիոջաբվիլին այնքան էլ լավատեսորեն չի տրամադրված: «Քանի դեռ չի լինի օրենք, որը կկանոնակարգի գործառույթների բաժանումը կենտրոնի եւ ինքնավարության իշխանությունների միջեւ, հարցը չի լուծվի: Սա է գլխավոր պատճառը, որ կա ճգնաժամ, մնացած հարցերն ածանցյալն են: Ամեն դեպքում ուժային մեթոդներով որեւէ հարց չի լուծվի», «Ազգի» հետ զրույցում ասաց Չիոջաբվիլին:

Վրաց-աջարական հակասությունները նոր երեւույթ չեն, դրանք գալիս են տակավին 1992 թ., երբ Վրաստանում իշխանության եկավ էդուարդ Շեւարդնաձեն: Ու թեեւ անցնող 11 տարիներին Աբաշիձեի եւ Շեւարդնաձեի հակասությունները չէին վերածվել ակնհայտ ճգնաժամի, Բաթումի եւ Թբիլիսիի միջեւ միշտ էլ առկա էին տարաձայնություններ: Սակայն մյուս կողմից Աբաշիձեն եւ Շեւարդնաձեն եկել էին համաձայնության, ըստ որի կողմերը չէին միջամտում միմյանց ներքին գործերին: Շեւարդնաձեն հաշվել էր այն մտի հետ, որ Աջարիայում տեր ու տնօրենն Աբաշիձեն է: Վերջինս անձամբ տնօրինում էր ֆինանսական այն բոլոր եկամուտները, որ տանում էր Աջարիան Խուցիձվիլու կարծիքով, Աջարիայի եւ Թբիլիսիի հակամարտությունը չի ավարտվել, խնդիրը շատ խորն է եւ իր մասին դեռ կհիշեցնի: «Տվյալ փուլում ճգնաժամը հաղթահարվում է, իսկ մարտի 28-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններից հետո ինչպիսին կլինի իրավիճակը, դժվար է ասել», ասաց նա:

Աջարիայի ճգնաժամի պատճառների մասին դեմ առ դեմ հանդիպումից հետո Սաակաշվիլին եւ Աբաշիձեն չափազանց ժլատ արտահայտվեցին: Վրաստանի նախագահը լրագրողներին տեղեկացրեց, թե ինքն Աջարիայում տեղի ունեցող գործընթացների մասին չի տիրապետում օբյեկտիվ եւ ամբողջական տեղեկատվության: «Վրաստանի եւ Աջարիայի միջեւ որեւէ հակամարտություն չկար եւ չէր էլ կարող լինել», ասաց Սաակաշվիլին, աղա հավելեց. «Վրաստանի տարածային ամբողջականության վերականգնումը սկսվում է Աջարիայից: Աջարիան լինելու է ազատ եւ միասնական Վրաստանի կազմում»:

Ասլան Աբաշիձեն եւս խուսափեց անդրադառնալ ճգնաժամի պատճառներին: «Այս հանդիպումը օրակարգից հանեց շատ հարցեր, որոնք առաջացել էին աղատեղեկատվության եւ որոշակի վակուումի պատճառով», ասաց «Առյուծը» հավելելով, որ Վրաստանի նախագահը մինչեւ այժմ ստացել է ոչ ճիշտ տեղեկատվություն Բաթումի նավահանգստի, թուրք-աջարական սահմանի Սարոիի մախսակետի մասին:

Աջարիայի հայերի միության ղեկավար Արմեն Գեւորգյանի կարծիքով, Թբիլիսիի եւ Բաթումի հարաբերություններում շատ բան կախված է լինելու մարտի 28-ին կայանալիք ընտրություններից, ինչպես նաեւ նրանից, թե ինչ ծեւով պետք է համատեղ վերահսկողություն իրականացնեն Բաթումի նավահանգստի, Սարոիի մախսակետի վրա: «Թբիլիսին ցանկություն ունի վերահսկողության տակ առնել նավահանգիստը, մախսակետը, բայց թե այդ ամենն ինչպես պետք է իրավական լուծում ստանա, պարզ չէ», ասաց Գեւորգյանը:

Վրաց ֆաղաքական վերլուծաբանների այն կարծիքի են, որ Սաակաշվիլին փորձում է ուղղակի վերահսկողության տակ պահել Ֆինանսական հոսքերը, որ իրականացվում են Աջարիայում եւ Աջարիայի տարածով: Սաակաշվիլին եւ Աբաշիձեն պայմանավորվել էին, որ Թբիլիսին պետք է իր ներկայացուցիչն ունենա Բաթումի նավահանգստում եւ Սարոիի մախսակետում:

Երեկ, ինչպես հաղորդեց «Ռուսթավի-2» հեռուստաընկերությունը, Սաակաշվիլին Սարոիում իր ներկայացուցչի պատասխանում առաջարկել է 25-ամյա Դավիթ Ախալայային, իսկ Բաթումի նավահանգստում 26-ամյա Վասիլ Սանածեին: Պետք է նկատել, որ Աջարիան Վրաստանի կենտրոնական բյուջեի 3 տոկոս հարկատուներից է, ու քանի դեռ Թբիլիսին չի վերահսկում ֆինանսական հոսքերը, բյուջեի կատարման մասին խոսք չի կարող լինել:

Մինչեւ աջարական ճգնաժամը, Սաակաշվիլին եւ նրա կողմնակիցները պարզորոշ խոսում էին Աբաշիձեին տապալելու իրենց մտադրությունների մասին: Ուշագրավ էր, որ Աբաշիձեի հետ հանդիպումից հետո Սաակաշվիլին իր մի քանի հազար համակիրների առաջ ելույթում հայտարարեց. «Ես արեցի ամեն ինչ, անցա տանկերի եւ զինված մարդկանց միջով, որպեսզի ձեզ հանդիպեմ եւ հույս տամ: Մենք հասել ենք նրան, որ ամբողջ Վրաստանն ազատ է: Կոչ եմ անում ձեզ մասնակցել ընտրություններին, որպեսզի ազատագրենք Վրաստանի վերջին շրջանը՝ մեր Աջարիան»:

ԱՂԱՎՆԻ ՂԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Թբիլիսի
ԹԱԹՈՒԼ ՂԱԿՈՐՅԱՆ

ԱՖՂԱՆԱ-ՊԱԿԻՍՏԱՆՅԱՆ ՍԱՀՄԱՆ

NBC-ի տվյալներով, ազ Զաուահիրին վիրավորված է

Ուսամա բեն Լադենի մերձավոր ազգային օգնական, եգիպտոսցի Այման ազ Զաուահիրին մարտի ժամանակ վիրավորվել է Վազիրստանի նահանգի լեռներում, պակիստանա-աֆղանական սահմանի մոտ: Պակիստանի հետախուզության անանուն ներկայացուցչի վկայակոչելով այդ մասին հաղորդել է NBC հեռուստաընկերությունը:

Երեկ առավոտյան պակիստանյան զորերը վերսկսել են Վազիրստանի կավաշեն այն ամրոցի գնդակոծությունը, որտեղ հավանաբար թաքնվում է Այման ազ Զաուահիրին: Երեկ «Ազգը» տեղեկացրեց, որ պակիստանյան զորքը շրջապատել է այդ ամրոցը: Վերջինիս շենքերը հրետակոծվել են, ինչպես նաեւ գնդակոծվել ուղղաթիռներից:

NHK հեռուստաընկերության տվյալներով, ամրոցի պաշտպանները համառորեն դիմադրում են, օգտագործելով խոշոր տրամաչափի գնդացիրներ եւ ռռնականետեր: Պաշտպանների մեծ մասը «Ալ Ղաիդայի» տեղացի համակիրներ են: Պակիստանի հատուկ ծառայությունների ծերբակալած «Ալ Ղաիդայի» 18 համակիրներ ավելի վաղ հայտնել էին, թե Այման ազ Զաուահիրին շրջապատված ամրոցում է: Երեք ծերբակալված գրոհայիններից ոմանք հայտնել են, թե Զաուահիրին վիրավոր է:

«Ալ Ղաիդայի» երկրորդ դեմքը համարվող Այման ազ Զաուահիրին գլխավորել է «Իսլամական ջիհադի» եգիպտական բաժանմունքը, որը 1991թ. կազմակերպեց Եգիպտոսի նախագահ անվար Սադաթի սպանությունը: 1998 թ. խմբավորումը միացավ «Ալ Ղաիդային»:

Որոշ փորձագետներ Զաուահիրիին համարում են «Ալ Ղաիդա» կազմակերպության «ուղեղը»: Իսլամի ուսումնասիրման ամերիկյան խորհրդի ղեկավար, Պակիստանի իսլամական հիմնադրամի նախագահ, դոկտոր Հաֆիզ Մալիհի խոսքերով, Զաուահիրին եւ բեն Լադենը «մտերիմ բարեկամներ» են: «Բայց շատերն ասում են, որ Զաուահիրին ուղեղն է, իսկ բեն Լադենը սոսկ խորհրդանիշ է», ընդգծում է Մալիհը:

CNN հեռուստաընկերության վերլուծաբան Պետեր Բերգերը եւս գտնում է, որ ազ Զաուահիրին բեն Լադենից ավելի կարեւոր դեմք է: «Նա ազդեցություն է գործել բեն Լադենի վրա, արմատականացրել է նրան», ասում է Բերգերը: Այման ազ Զաուահիրիի ծերբակալմանն օժանդակող անձանց ամերիկացիները խոստացել են 25 մլն դոլար:

Բեն Լադենի ձերբակալմանն ուղղված պարգեւավճարը կրկնապատկվել է

ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատը որոշել է կրկնապատկել Ուսամա բեն Լադենի ծերբակալմանը նպաստող տեղեկատվության դիմաց խոստացված պարգեւավճարը, 25-ից հասցնելով 50 մլն դոլարի: Օրենսդիրները միահամուռ քվեարկել են նոր օրինագծի օգտին:

Ընդունված փաստաթղթի համաձայն, ԱՄՆ կառավարությունը կարող է պարգեւավճար առաջարկել նաեւ այն տեղեկությունների դիմաց, որոնք թույլ կտան կասեցնել ահաբեկիչներին ֆինանսավորող կազմակերպությունների (այդ թվում քարտեղների առեւտրականների) գործունեությունը:

Օրինագիծը փաստորեն հաստատում է ահաբեկիչների ֆինանսավորման եւ թմրաբիզնեսի սերտ կապը: Կոնգրեսական Մարկ Քրի խոսքերով, պեդեռալարամենտը կկարողանա 5-ից 25 մլն դոլարի հասցնել առավելագույն պարգեւավճարի չափը, որը խոստացվում է ահաբեկիչների, ինչպես նաեւ ահաբեկչական կազմակերպությունները ֆինանսավորող թմրագործմոլների ծերբակալմանն օժանդակողների:

Միաժամանակ նշվում է, որ եթե տեղեկատվությունն ստացվի հեռավոր գյուղական շրջանների բնակիչներից, որտեղ տարադրամի մեծ պահանջարկ չկա, ապա վճարումները կարող են իրականացվել լայն սպառման ապրանքների, գյուղտեխնիկայի կամ կենցաղային էլեկտրատեխնիկայի տեսքով:

Կոռեան Իրաքում չի մասնակցի ռազմական գործողություններին

Լեհաստանն էլ երկմտանքի մեջ է

Կոռեայի Հանրապետությունը հրաժարվել է Իրաքյան Քրդստանի Քիրքուք քաղաք զորք ուղարկել ԱՄՆ վարչակազմի այն հայտարարությունից հետո, թե հարավկորեացի զինվորները սկիզբ կլինեն հարձակողական գործողություններ իրականացնել Իրաքի տվյալ շրջանում: Սեուլը ձգտում է իր զորքերը հեռու պահել ռազմական գործողություններից, կորեացիների գլխավոր խնդիրը համարելով հետպատերազմյան Իրաքի ենթակառույցի վերականգնումը:

Ասոշիեյթեդ պրես գործակալության տվյալներով, Սեուլի իշխանությունները մտադիր են կորեական զորաբաժինը տեղաբաշխել իրաքյան համեմատաբար խաղաղ ֆաղաքներում երկրի կենտրոնում կամ հարավում: Թերեւս զորք ուղարկվի Նեջեֆ, որտեղ ներկայումս տեղաբաշխված են իսպանական ուժեր: Զինվորական աղբյուրների տվյալների, ծրագրերի փոփոխման կապակցությամբ հարավկորեական զորքերի տեղափոխումն Իրաք հետաձգվում է մինչեւ հունիս:

Կորեացիները մտադիր են «պահպանել անկախ օրերաշիվ հրամանատարություն եւ զբաղվել վերականգնողական աշխատանքներով»: Կորեան Քիրքուք զորք ուղարկելուց հրաժարվեց այն պահին, երբ ԱՄՆ-ի որոշ կարեւորագույն դաշնակիցներ վերանայում են հակաիրաքյան կոալիցիային իրենց մասնակցության պայմանները: Իսպանիայի համընդհանուր ընտրություններում սոցիալիստների հաղթանակից հետո այդ երկիրը հայտարարեց, թե Իրաքից դուրս է բերելու իր զորքը: Բացառված չէ, որ Իրաքի օկուպացմանը մասնակցելուց հրաժարվի նաեւ Լեհաստանը: Այդ երկրի նախագահ Ալեքսանդր Կվասնեսկին հինգշաբթի օրը հայտարարեց, թե Լեհաստանին մոլորության մեջ են գցել զանգվածային բնաջնջման իրաքյան զենքի առնչությամբ:

Տարեսկզբին Կորեայի խորհրդարանը հավանություն էր տվել կառավարության այն առաջարկությանը, թե Իրաք ուղարկվեն 3600 զինվորներ, այդ թվում ծովային հետեւակի եւ հատուկ ջոկատների մարտիկներ: Նրանք պետք է փոխարինեն կորեացի զինվորական բժիշկներին եւ ճարտարագետներին, որոնք Իրաքում տեղաբաշխվել էին անցյալ տարվա պատերազմի ավարտից հետո:

Պ. Բ.

Մահափորձ Թայվանի նախագահի եւ փոխնախագահի վրա

Երեկ առավոտյան անհայտ նետանաւոն գնդակոծել է Թայվանի նախագահ Չեն Շույբենին եւ փոխնախագահ Անեթ Լյու Սյու Լյանին: Ոոյթեր գործակալությունը հաղորդում է, որ նախագահական շախուրը գնդակոծվել է Թայնան քաղաքում, բաց ավտոմեքենայով երթեւեկելիս: Ականատեսների վկայությամբ նախագահը ծանր վիրավորվել է որովայնի շրջանում եւ տեղափոխվել հիվանդանոց: Փոխնախագահը վիրավորվել է ոտքից: Տեղական հեռուստաընկերության հաղորդման համաձայն, նախագահի կյանքը վտանգված չէ:

Թայվանի հեռուստատեսությունը միջադեպի կապակցությամբ հաղորդել է, թե նախագահը վիրավորվել է բդբե հրթիռի պայթյունից: Սակայն իսպանական էՖէ գործակալությունը եւս նշում է, որ նախագահն ու փոխնախագահը գնդակոծվել են: Ամեն դեպքում կարեւորն այն է, որ մահափորձն իրականացվել է Թայվանում կայանալիք նախագահական ընտրությունների եւ «պատմական» հանրաքվեի նախօրեին:

Հանրաքվեն պետք է պատասխանի այն հարցին, թե ինչպես են զարգանալու Թայվանի հարաբերությունները ՉԺՀ-ի հետ: Կղզու բնակիչները պետք է որոշեն, թե պե՞տք է արդյոք հակահրթռային պատմպանությունն ուժեղացնել, եթե ՉԺՀ-ն չհրաժարվի Թայվանի դեմ ուժ կիրառելու դիտավորությունից: Հանրաքվեի դրված մյուս հարցը վերաբերում է ՉԺՀ-ի հետ հաշտության բանակցությունների ծավալման հնարավորությանը:

Չնայած մահափորձին, Թայվանում պատմպանական հայտարարվել է, որ այսօր, մարտի 20-ին, նախագահական ընտրությունները կայանալու են: Ընտրական հանձնաժողովի հայտարարության համաձայն, օրենքը նախատեսում է ընտրությունների անցկացում նույնիսկ նախագահության թեկնածուներից որեւէ մեկի մահվան դեպքում:

Միաժամանակ հաղորդվում է, որ Պեկինը դատապարտել է Թայվանում այսօր կայանալիք «պատմպանական» հանրաքվեն, հանգի կողմն համարում է ՉԺՀ անբաժանելի մասը: Վաշինգտոնը եւ Մոսկվան նույնպես դատապարտել են հանրաքվեի անցկացումը:

ՊՐԱՏ

ՈՒՄ ԵՆ ԸՆՏՐԵԼ ՔՆԱԴԱՏՆԵՐԸ

Կրկնակի օսկարակիր Ջոդի Ֆոսթերի համոզմամբ, «Օսկարը» վիճակախաղի պես բան է: Հավակնորդների անունները հրապարակելուց հետո հաջողությունն է կանխորոշում, թե ում բախտը կբերի եւ ոչ թե թեկնածուի իրական արժանիքները»:

Ամերիկացի կինոմշնաղատները, որոնց բազմաթիվ միավորումները ավանդաբար իրենց մրցանակներն են շնորհում, մասնագիտական պարտի թելադրանքով ջանում են, ամենից առաջ, «իրական արժանիքները» նկատի առնել, ուստի նրանց տեսակետները այնքան էլ չեն համընկնում օսկարյան վիճակախաղի արդյունքներին: Անցյալ տարի այդ անհամապատասխանությունը աղեսալի էր: Իսկ այս տարի 2003-ի լավագույն ֆիլմն ընտրելիս մշնաղատների եւ կինոակադեմիկոսների կարծիքները այդքան չեն բեւեռվել: Նյու Յորի, Վաշինգտոնի, Լաս Վեգասի, Չիկագոյի, Դալասի կինոգետները, ինչպես նաեւ հեռարձակող ընկերությունների կինոմշնաղատների ասոցիացիան եւ Ինտերնետի կինոմշնաղատների ընկերությունը համամիտ են կինոակադեմիայի վճռին լավագույն կինոնկար ճանաչելով «Մասանիների տիրակալի» երրորդ մասը «Արքայի վերադարձը»: Մինչդեռ Կինոմշնաղատների ազգային ընկերությունը, Լոս Անջելեսի եւ Սիեթլի նրանց գործընկերները առաջնությունը տվել են «Ամերիկյան շուք» ֆիլմին, որը կինոակադեմիան նույնիսկ չէր ընդգրկել «լավագույն կինոնկար» անվանակարգում նվիրական արձանիկի հավակնորդների հնգյակի մեջ: «Ամերիկյան շուքը» ներկայացված էր «Օսկարի» միայն «լավագույն էկրանավորման սցենար» անվանակարգով, բայց այդ միակ հնարավորությունն անգամ տանուլ տվեց: Իսկ Կինոմեկնաբանների ազգային խորհրդի եւ Բոստոնի կինոմշնաղատների ընկերության կարծիքով, լավագույն ֆիլմ կոչվելու արժանի է «Խորհրդավոր գետը»: Միայն Սան Ֆրանցիսկոյի մշնաղատներն են հա-

մոզված, թե դափնիները պատկանում են Կոպոլայի դստեր Սոֆյայի նկարահանած «Թարգմանության դժվարությունները» ֆիլմին:

Լավագույն ռեժիսորի տիտղոսը շնորհելիս մշնաղատներն ավելի համեստախոհ են հանդես եկել թե միմյանց, թե կինոակադեմիայի հետ: Նրանց մեծամասնության վրա «Մասանիների տիրակալի» պես վիթխարի կոթողը կյանքի կոչած Փիթեր Ջեքսոնի ջանքերն այնպիսի տպավորություն են գործել, որ Հոլիվուդը նվաճած այս նորզելանդացին, «Օսկարների» կողքին, եւս ութ մրցանակ է ընդունել կինոմշնաղատների ծեռքից: «Ավարն» այնքան ծոխ է, որ Ջեքսոնն իր տան սենյակներից մեկում կարող է փառքի սրահ բացել: Բայց Նյու Յորքի, Բոստոնի եւ Սիեթլի կինոգետները, ըստ երեւույթին, հոլիվուդյան «մեծ ոճի» ջատագովները չեն, հետեւաբար լավագույն ռեժիսոր են համարում ոչ թե Փիթեր Ջեքսոնին, այլ Սոֆյա Կոպոլային, որի «Թարգմանության դժվարությունները» գաճաճ է «Մասանիների տիրակալի» նման հսկայի համեմատ: Ինչեւէ, Դավթի եւ Գողիաթի մրցամարտը նրանք վճռել են Դավթի օգտին: Իսկ կինոմեկնաբանների ազգային խորհուրդը եւ Կինոմշնաղատների ազգային ընկերությունը հատուկ կարծիք ունեն. առաջինը լավագույն ռեժիսոր է ճանաչել առհասարակ կինոակադեմիայի ուշադրությանը չարժանացած էդուարդ Ցվիտին «Վերջին սամուրայը» ֆիլմի համար, որը հերթական անգամ խորտակեց Թոմ Քրուզի օսկարյան անուրջները, երկրորդն էլ մեծարանքի տուրք է մատուցել «Խորհրդավոր գետը» նկարահանելու համար վերստին ռեժիսոր կարգված «վերջին կովբոյ» Քլինթ Իսթվուդին: Կինոակադեմիան Իսթվուդի փոխարեն «Օսկարի» արժանի համարեց նրա ֆիլմի դերակատարներին: Շոն Փենին եւ Թիմ Ռոբինսին բաժին հասավ կինոակադեմիայի ոսկե արձանիկը, որը նրանք ստացան «Վերջին սամուրայում» եւ «Խորհրդավոր գետում» ներկայացրած իրենց դերակատարումների համար: Ընդ որում, Ռոբինսի համար դա արդեն երրորդ «Օսկարն» էր, որից առաջ նա ստացել էր լավագույն երկրորդական դերի մրցանակը «Ծնունդ հինգշաբթի օրը» եւ «Մեծ ցատկ» ֆիլմերում ունեցած դերակատարումների համար: Ռոբինսի հաղթանակը կանխորոշված էր, քանի որ նա արդեն հասցրել էր ստանալ Ոսկե գլոբուսը, Կինոմեկնաբանների ազգային խորհրդի եւ Կինոմշնաղատների ազգային ընկերության մրցանակները: Ռոբինսի հաղթանակը ոչ միայն կանխորոշված էր, այլեւ արդարացված: Նա ստեղծել էր ֆիլմի ամենահիշարժան կերպարը, ինչպես նաեւ ամենաանկանխատեսելի կերպարը: Ռոբինսի հերոսը ոչ միայն ֆիլմի ամենահետաքրքրական կերպարն էր, այլեւ ամենաանկանխատեսելի կերպարը: Ռոբինսի հերոսը ոչ միայն ֆիլմի ամենահետաքրքրական կերպարն էր, այլեւ ամենաանկանխատեսելի կերպարը:

Ֆրանցիսկոյի կինոմշնաղատները նախապատվությունը տվել են կինոակադեմիայի կողմից անտեսված Փիթեր Սարսգարդին («Սթիվն Գլասի գործը»), Թիմ Ռոբինսի պես երկուական մրցանակներ են վաստակել Ալեք Բոլդուինը («Արգելակ») եւ Բենիսիո Դել Տորոն («21 գրամ»), որոնց բախտը չժպտաց օսկարյան վիճակահանության ժամանակ:

Եթե «լավագույն տղամարդկանց» ընտրությունը նման տարակարծությունների տեղիք է տվել, ապա մոլորասանուհուն, Ռենե Զելվեգերին («Ցուրտ լեռը») ըստ արժանվույն է «Օսկար» շնորհվել միայն հեռարձակող ընկերությունների կինոմշնաղատների ասոցիացիայի եւ Դալասի նրանց համախոհների կարծիքով: Ավելի մեծ հավանության են արժանացել «Օսկարը» տանուլ տված Պատրիսիա Քլարսոնը («Փոր-ինչ էյփրիլի մասին», «Կայարանապետը») եւ իսլամական հեղափոխությունից հետո Կալիֆոռնիայում հաստատված պարսկուհի Շոհրե Աղդաշլուն («Ավազե եւ մշուշե տունը») առաջինը հինգ, երկրորդը երեք մրցանակ վաստակելով:

Եվ ի վերջո, ինչպես միշտ, կինոմշնաղատներին եւ ակադեմիկոսներին չի հաջողվել համաձայնության գալ լավագույն արտասահմանյան ֆիլմի վերաբերյալ: Կանադացի Դընի Արկանի «Բարբարոսների ներխուժումը», որը զույգ մրցանակի է արժանացել նաեւ Կաննի փառատոնում, լոկ Կինոմեկնաբանների ազգային խորհրդի եւ Հեռարձակող ընկերությունների կինոմշնաղատների ասոցիացիայի համոզմամբ է լավագույնը կոչվելու պատվին արժանի: Բրազիլացի Ֆերնանդո Մեյրելեսի «Աստծո քաղաքը», որը չորս հավանական «Օսկարներից» ոչ մեկը չբահեց, ըստ Նյու Յորքի, Դալասի, Չիկագոյի մշնաղատների շատ ավելի արժանավոր է: Մյուսներն էլ իրենց մրցանակները պարգեւել են ֆրանսիական «Գնացքի մարդը», ֆինլանդական «Առանց անցյալի մարդը», հոլանդական «Ոդին» ֆիլմերին եւ Ֆրանսիայի, Բելգիայի ու Կանադայի համատեղ արտադրությամբ ստեղծված «Բելվիլի եռյակը» մուլտիպլիկացիոն ժապավենին, որը «լավագույն լիամետրաժ անիմացիա» անվանակարգում «Օսկարը» գիջեց տարվա ամենաշահութաբեր հիթին «Նեմոյին որոնելիս» ամերիկյան մուլտֆիլմին: Դե, ամերիկացիները, սովորաբար, նախընտրում են այն, ինչ իրենցն է, սեփականը:

ԹԵԺ ՏԱՍՆՅԱԿԸ

1993-ին ամենամեծ դրամարկղային հաջողության արժանացած հոլիվուդյան հիթերը

1. «ՆԵՄՈՅԻՆ ՈՐՈՆԵԼԻՍ»
Ռեժիսոր՝ Էնդրյու Սթենթոն
Հավաքած գումարը. $ 340 միլիոն

«Փիխար» եւ «Դիսնեյ» կինոընկերությունների խաչասերումից ծնված հինգերորդ արարածը՝ Նեմո անվամբ ձուկը, որի արկածների ոդիսականն է այս մուլտիպլիկացիոն ֆիլմը, իսկական ոսկե ծկնիկ դուրս եկավ. Նեմոն աստղաբաշխական հասույթի հետ մեկտեղ իր տերերին «Օսկար» մրցանակ բերեց:

2. «ԿԱՐԻԲՅԱՆ ԾՈՎԻ ՆԱՎԱՀԵՆՆԵՐԸ. ՄԵՎ ՄԱՐԳԱՐՏԻ ՆՇԴՎԱԾԸ»
Ռեժիսոր՝ Գոր Վերբինսկի
Դերերում. Տոնի Դեյի, Տեֆրի Ռաբ, Օռլանդո Բլում, Քիրա Նայթլի:
Հավաքած գումարը. $ 305 միլիոն

Դիսնեյլենդի աստղակիոններից մեկի հիման վրա ստեղծված արկածային ժապավենին հինգ հավանական «Օսկարներից» ոչ մեկը բաժին չընկավ, բայց կինոակադեմիայի ոսկու փոխարեն կարիբյան ծովի նավահենները՝ Տոնի Դեփի գլխավորությամբ, վաստակեցին 16-րդ տեղը բոլոր ժամանակների մեծագույն կինոհիթերի ցանկում:

3. «ՄԱՏՐԻՑԱ. ՎԵՐԱԲԵՌՈՒՄ»
Ռեժիսորներ՝ Էնդի եւ Լարի Վաչովսկի
Դերերում. Քիանու Ռիվզ, Լորենս Ֆիշբըրն, Քերի Ան Մոս, Հյուգո Ուիվինգ, Մոնիկա Բելուչի:
Հավաքած գումարը. $ 281,5 միլիոն

Կիբերտեոեգության երկար-սպասված երկրորդ մասը նախերգի եւ վերջերգի համեմատ կինովարձույթում լավագույն արդյունին հասավ, որը ոմանք բացատրում են փրկագոտու պես հայտնված հումորի զգացմամբ: Ինչեւէ, «վերաբեռնումը» այնքան հաջող էր, որ Վաչովսկի եղբայրների եւ թվային տեխնոլոգիաների տճանճի պոռուը եզրափակում է բոլոր ժամանակների մեծագույն կինոհիթերի խանյակը:

4. «ԱՄԵՆԱԶՈՐ ԲՐՈՒՍԸ»
Ռեժիսոր՝ Թոմ Շեդիակ
Դերերում. Տիմ Քերի, Տենիֆեր Էնիսթոն, Մորգան Ֆրիման:
Հավաքած գումարը. $ 242,5 միլիոն

Որքան էլ Տիմ Քերին հավակնում է դրամատիկ դերասան կոչվել, ամերիկացիները պատրաստ են ծեռը գրպանը տանել՝ միայն ծամածռվող Քերիին տեսնելու համար: Նրան մնում է բավարարվել թիվ մեկ կատակերգուի տիտղոսին հարակից միլիոններով, թեկուզեւ դրանք ստեղծագործական հավակնությունների հետ չեն համաեղվում:

5. «ԻՔՍ ՄԱՐԴԻԿ 2»
Ռեժիսոր՝ Բրայան Սինգեր:
Դերերում. Պատրիկ Սթյուարթ, Հյու Ջեքման, Ցան Մարֆլեն, Հալի Բերի, Ֆամկե Յանսեն, Ռեբեկա Ռոմին - Ստամոս:
Հավաքած գումարը. $ 215 միլիոն

Մուտանտները վերադարձել են հավաստելու, որ փոփիրոնային կինոկոմիքսի թագավորությունը հոլիվուդում շարունակվում է:

6. «ԹԵՐՄԻՆԱՏՈՐ 3. ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ»
Ռեժիսոր՝ Ջոնաթան Մոսթոու
Դերերում. Առնոլդ Շվարցենեգեր, Քլեր Դեյնս, Նիք Սթալ, Քրիստիան Լոուեն:
Հավաքած գումարը. $ 150 միլիոն

Աշխարհի լավագույն ռոբոտը, որ հայտնի է «երկաթե Առնիի» կերպարանքով, հրաժեշտի բարեհաջող հյուրախաղերից հետո Կալիֆոռնիայի նահանգապետը դարձավ:

7. «ԷԼՖԸ»
Հավաքած գումարը. $ 139,5 միլիոն

Ընտանեկան ֆիլմը հոլիվուդի ավանդական հաղթաթղթերից է: Այս անգամ խոսքը Չմեռ պարոյի փախցրած մանկան մասին է, որը վերադարձվում է արդեն հասուն տարիքում:

8. «ՎԱՏ ՏՂԱՆԵՐԸ 2»
Ռեժիսոր՝ Մայքլ Բեյ
Դերերում. Ուիլ Սմիթ, Մարտին Լորենս, Գաբրիել Յունիոն, Ջո Պանտոլիանո:
Հավաքած գումարը. $ 138,5 միլիոն

90-ականների մեծ կինոհիթերից մեկի շարունակությունը նկարահանված է սեւ հերոսներով ու սեւ հումորով լցոնված կոմիկական մարտաֆիլմի նույն բաղադրատոմսով. սա հենց այն է, ինչ հաճույքով պատրաստ է կլլել սեւ հանդիսատեսը:

9. «ՄԱՏՐԻՑԱ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ»
Ռեժիսորներ՝ Էնդի եւ Լարի Վաչովսկի
Դերերում. Քիանու Ռիվզ, Լորենս Ֆիշբըրն, Քերի Ան Մոս, Հյուգո Ուիվինգ, Ջադա Փինքեթ - Սմիթ:
Հավաքած գումարը. $ 135,5 միլիոն

«Հեղափոխությամբ» նշանավորված «Մատրիցայի» վերջաբանը, դրամարկղի առումով, բաս է գիջում միջերգին, բայց արժանի ավարտ է ընչաքաղց ասմի համար:

10. «ՋԱՅՐՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒՀԻ»
Ռեժիսոր՝ Փիթեր Սիգալ
Դերերում. Թեմ Նիխլսոն, Ադամ Սանդլեր, Մարիսա Տոմեյ, Քրիստա Ալեն:
Հավաքած գումարը. $ 133 միլիոն

60-ն անց Թեմ Նիխլսոնը Ռոբերտ Դե Նիրոյի նման վերադարձավորվել է կատակերգության ժանրում՝ մարմնավորելով մի հոգեվերլուծողի, որի խնդիրը զայրույթի պոռթկումները սանձելն է, այնինչ նա ինքը շատ բուժման կարիք ունի: Սա ֆիլմին անցյալ տարվա ամենածիծաղելի կատակերգության համարումն է բերել:

ԱՐԺԵ ԴԻՏԵԼ



24 մարտի, 23.15 Արմեն-Ակոթ

■ **«Այնտեղ, ուր գետն է հոսում»★★★**: Ռեժիսոր՝ Ռոբերտ Ռեդֆորդ: Դերերում. Քրեյգ Շեֆեր, Բրեդ Փիթ, Թոմ Սիերիք, Բրենդա Բլեթին: ԱՄՆ, 1992: Ընտանեկան կինովեպ:

25 մարտի, 22.05 Ֆ1

■ **«Սիցիլիացիների կլանը»★★**: Ռեժիսոր՝ Անրի Վեռնոյ: Դերերում. Ալեն Դելոն, ժան Գաբեն, Լինո Վենտուրա: Ֆրանսիա - Իտալիա, 1969:

Քրեական ֆիլմ «դարի կողոպուտի» մասին:

26 մարտի, 22.50 Շողակաթ

■ **«Կասաբլանկա»★★**: Ռեժիսոր՝ Մայքլ Քերթիս: Դերերում. Համֆրի Բոգարթ, Ինգրիդ Բերգման: ԱՄՆ, 1943:

Սիրո դասական պատմություն, որին 2 «Օսկար» է շնորհվել:

28 մարտի, 22.10 Ֆ1 երեւան

■ **«Բուրժուազիայի համեստ հմայքը»★★★**: Ռեժիսոր՝ Լուիս Բունյուել: Դերերում. Ֆերնանդո Ռեյ, Դելֆին Սեյրիգ; Ստեֆան Օդրան, ժան-Պիեռ Կասել: Ֆրանսիա, 1972:

«Օսկարի» արժանացած սյուռռեալիստական ֆարս վերնախավի կյանքից:

28 մարտի, 00.30 ՀԲ

■ **«Դատնակահարուհին»★★★**: Ռեժիսոր՝ Միխայել Հանեքե: Դերերում. Իզաբել Յուպեր, Բենուա Մաժիմել: Ավստրիա - Ֆրանսիա, 2001:

Պաթոլոգիկ սիրավեպ, որն արժանացել է Կաննի մեծ մրցանակին, ինչպես նաեւ մրցանակներ բերել գլխավոր դերակատարներին:

Էջը պատրաստեց ՀԱՍՄԻԿ ԲՈՅԱՋՅԱՆԸ

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը մարտի 19-ի նիստում, որը վարում էր բանկի նախագահ Տ. Սարգսյանը, ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները թողեց անփոփոխ. կնվող ռեպո-համաձայնագրերի տոկոսադրույքը տարեկան 6 տոկոս, տրամադրվող լոմբարդային վարկերինը՝ 20, ներգրավվող ավանդներինը՝ 3 տոկոս:

ԿԲ մամուլի ծառայությունը հրապարակում է փետրվարի 20-ից մարտի 4-ն ընկած ժամանակահատվածում մակրոտնտեսական իրավիճակի եւ ֆինանսական շուկայի միտումների նկարագիրը:

Մակրոտնտեսական իրավիճակը: Ըստ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների, փետրվարի 20-ից մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում գրանցվել է 0.1% սղաճ: Փետրվարի 20-ից մարտի 4-ն ընկած ժամանակահատվածում բյուջեի միջին օրական հարկային եկամուտները կազմել են մոտ 964 մլն դրամ:

Դրամավարկային հաղթահարություն: Փետրվարի 20-ից մարտի 4-ն ընկած ժամանակահատվածում փողի բազան աճել է 242 մլն դրամով՝ ծրագրված առավելագույնը 2 մլրդ 117 մլն դրամի փոխարեն: Փողի բազայի աճն ուղեկցվել է ՁԱՄ-ի 346 մլն դրամ նվազումով եւ ՁՆՄ-ի 588 մլն դրամ աճով:

Փետրվարի 28-ին նախորդած շաբաթվա ընթացքում փողի զանգվածն (առանց կուտակված տոկոսների) աճել է 2 մլրդ 451 մլն դրամով եւ կազմել 221 մլրդ 249 մլն դրամ: Շրջանառության մեջ եղած կանխիկը նվազել է 566 մլն դրամով, իսկ ավանդներն աճել են 3 մլրդ 17 մլն դրամով: Ցպահանջ արտարժութային ավանդները նվազել են 205 մլն դրամով, իսկ ցպահանջ դրամային ավանդներն աճել են 1 մլրդ 453 մլն դրամով: Ժամկետային արտարժութային ավանդներն աճել են 1 մլրդ 569 մլն դրամով եւ կազմել 52 մլրդ 442 մլն դրամ: Պայմանավորված վերոգրյալով՝ դրամային զանգվածն աճել է 1 մլրդ 88 մլն դրամով եւ փետրվարի 28-ին կազմել 118 մլրդ 921 մլն դրամ:

Ֆինանսական շուկայի միտումները: Նշված ժամանակաշրջանում բդքակցային հաշիվների միջին մնակարդակը կազմել է 16,400 մլն դրամ, իսկ պարտադիր պահուստավորումը՝ 13,600 մլն դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ներքին արժութային շուկայում, ՊՊ առաջնային եւ երկրորդային շուկաներում դիտվել են հետեւյալ միտումները:

Ներքին արժութային շուկա: Վերոհիշյալ ժամանակահատվածում ԿԲ կողմից վաճառվել է 75 հազ. ԱՄՆ դոլար՝ 570.40 դրամ փոխարժեքով, ինչպես նաեւ գնվել է 2 մլն ՌԴ ռուբլի՝ 19.74 դրամ փոխարժեքով:

Միջբանկային շուկայում գործառնությունների համախառն ծավալը կազմել է 88 մլն ԱՄՆ դոլար, որից 45 մլն ԱՄՆ դոլարի առք եւ 43 մլն ԱՄՆ դոլարի վաճառք՝ համապատասխանաբար 563.62 եւ 565.07 դրամ միջին կշռված փոխարժեքներով:

Նշված ժամանակահատվածում արտարժույթի շուկայում ձեւավորված 33 դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 0.04%-ով՝ 564.07 դրամից մեկ ԱՄՆ դոլարի դիմաց հասնելով մինչեւ 564.30 դրամի:

ՊՊ առաջնային շուկա: Տեղի է ունեցել ՊՊ-երի մեկ թողարկում: Տեղաբաշխվել է 52-շաբաթյա պարտատոմս՝ 600 մլն դրամ ծավալով: ՊԿՊ-երի նկատմամբ պահանջարկը կազմել է 1 մլրդ 160 մլն դրամ եւ ձեւավորվել է 6.03% եկամտաբերություն:

ՊՊ երկրորդային շուկա: Իրականացվել է 1 մլրդ 383 մլն դրամի գործարք՝ 6.56% միջին կշռված եկամտաբերությամբ: Առաջին շաբաթվա ընթացքում իրականացվել է 609 մլն դրամի գործարք՝ 6.22%-ով, երկրորդ շաբաթվա ընթացքում՝ 774 մլն դրամի գործարք՝ 6.83%-ով:

Միջբանկային ռեպո գործառնություններ: Միջբանկային շուկայում իրականացված ռեպո գործառնությունների ծավալը կազմել է 3 մլրդ 161 մլն դրամ՝ 4.93% միջին կշռված տոկոսադրույքով: Առաջին շաբաթվա ընթացքում իրականացվել է 1 մլրդ 270 մլն դրամ ծավալով ռեպո գործարք՝ 5.23%-ով, երկրորդ շաբաթվա ընթացքում՝ 1 մլրդ 891 մլն դրամ ծավալով գործարք՝ 4.73%-ով:

Հաջորդ երկշաբթյա ժամանակահատվածի ծրագրավորում: Մարտի 5-18-ն ընկած ժամանակահատվածում փողի բազան, ծրագրավորման համաձայն, կնվազի 1 մլրդ 119 մլն դրամով եւ վերջինիս վերին սահմանը ժամանակաշրջանի վերջում կկազմի 101 մլրդ 413 մլն դրամ:

Կառավարության զուտ պարտավորությունների ցուցանիշը, ըստ Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության բյուջետային հարցերի հանձնաժողովի տվյալների, կնվազի 1 մլրդ 586 մլն դրամով՝ պայմանավորված կենտրոնական գանձապետարանի միասնական հաշվի մնացորդի նույնման գումարի ածով: Բանկերի պարտավորությունները կաճեն 3 մլրդ 983 մլն դրամով՝ ի հաշիվ 2 մլրդ 32 մլն դրամին համարժեք արժութային սվոփի, 1 մլրդ 31 մլն դրամի հակադարձ ռեպո գործարքի, ինչպես նաեւ 920 մլն դրամի ավանդների զուտ մարման: Միաժամանակ նախատեսվում է զուտ այլ ակտիվների 2 մլրդ 244 մլն դրամի նվազում՝ հիմնականում պայմանավորված արժութային սվոփի մարմամբ: Վերոհիշյալ փոփոխությունները կհանգեցնեն ՁՆՄ-ի 153 մլն դրամի աճի:

Ըստ ծրագրավորման, կհրականացվի 299 մլն դրամի արտաքին պարտքի տոկոսագումարների, 774 մլն դրամի արտաքին պարտքի, ինչպես նաեւ 183 մլն դրամի անդամակցության գումարների վճարումներ: Միեւնույն ժամանակ ծրագրավորվել է առավելագույնը 2 մլրդ 260 մլն դրամի արտարժույթի վաճառք, որը նույնպես կհպատակի ՁԱՄ-ի նվազմանը: Արդյունքում, ՁԱՄ-ի ցուցանիշի կնվազի 1 մլրդ 272 մլն դրամով:

Ելնելով դրամային շուկաներում ձեւավորված տոկոսադրույքներից եւ ԿԲ տոկոսադրույքները շուկայական տոկոսադրույքներին համապատասխանեցնելու հանգամանքից՝ 33 կենտրոնական բանկի խորհուրդը որոշեց իջեցնել ռեպո համաձայնագրերի եւ ԿԲ կողմից ներգրավվող ավանդների տոկոսադրույքները՝ սահմանելով համապատասխանաբար 6% եւ 3%, իսկ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը թողնել անփոփոխ՝ 20%:

ՀՀ ԿԲ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հաշվառումային հաշվետվություն առ 1 հունվարի 2004 թ. Ձեւ N 1

Կազմակերպության ծածկագիրը
անվանումը Լեյդր Գեյզլ ՍՊԸ
Փաստացի գործունեություն դրամական շահումով խաղերի կազմակերպում
հիմնական երկու տեսակները
Պետական օգտիստում գրանցման համարը 26411004621
Հարկ վճարողի հաշվառման համարը 00055059
Չափի միավորը հազ. դրամ
Գտնվելու վայրը Երեւան, Հր. Քոչարի 15/8 հեռախոսը
Փաստացի գործունեության
իրականացման վայրը Արմավիրի մարզ, գ. Փարաքար Քաիրով

Ակտիվ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	010	14194	32925
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	14194	32925
II. Ընթացիկ ակտիվներ			
Այլ դեբիտորական պարտներ	180		8500
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	200	1662	9177
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	1662	17677
Հաշվեկշիռ	230	15856	50602
Պասիվ	**տող**	**Նախորդ տարվա վերջին**	**Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին**
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	240	10050	10050
Կուտակված շահույթ	270	3806	4317
Ընդամենը սեփական կապիտալ	300	13856	14367
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ փոխառություններ	380	2000	33000
Այլ կրեդիտորական պարտներ	450		3235
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	2000	36235
Հաշվեկշիռ	500	15856	50602

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 1 հունվարի 2004 թ. Ձեւ N 2

Ցուցանիշի անվանումը	Տող	Նախորդ տարվա միջանկյալ ժամանակաշրջան	Հաշվետու տարվա միջանկյալ ժամանակաշրջան
Արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	110182	63305
Հանձնառու շահույթ (վնաս)	030	110182	63305
Իրացման ծախսեր	040	(288)	
Վարչական ծախսեր	050	(85589)	(50866)
Արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	24305	12439
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում	080		(552)
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում	130	(1257)	(1760)
Ընդհանուր շահույթ (վնաս) նախկին շահութահարկի գծով	160	23048	10127
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	170	22833	9616
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180	215	511

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 1 հունվարի 2004 Ձեւ N 3

Սեփական կապիտալի տարրերի անվանումը Հոդվածներ	տող	I. Նախորդ տարի (ժամանակաշրջան) Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ		Կուտակված շահույթ	Ընդամենը
		Կանոնադրական կապիտալ	Զուտ գումար		
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2001 թ.	010	10050	10050	3591	13641
Վերահաշվարկված մնացորդը	030	10050	10050	3591	13641
Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ (վնաս)	060			215	215
Մնացորդը առ 31.12.2002 թ.	100	10050	10050	3806	13856
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2002 թ.	010	10050	10050	3806	13856
Վերահաշվարկված մնացորդը	030	10050	10050	3806	13856
Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ (վնաս)	060			511	511
Մնացորդը առ 31.12.2003 թ.	100	10050	10050	4317	14367

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 1 հունվարի 2004 թ. Ձեւ N 4

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ ժամանակաշրջան Գումար	դրամարկղ	դրամ	արտարժույթ	Հաշվետու ժամանակաշրջան Գումար	դրամարկղ	դրամ	արտարժույթ
Դրամական միջոցների սկզբնական մնացորդ	010	794	511	284		1663	1379	284	
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտք	020	110182	110182			63305	63305		
Արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների իրացումից	040	110182	110182			63305	63305		
Ընդհանուր գործառնական գործունեությունից մուտք									
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելք	050	4809	4809			2003	2003		
Նյութերի, արտադրանքի ձեռքբերման գծով	060	13056	13056			12294	12294		
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	070	3385	3385			2326	2326		
Վճարումներ աշխատակիցներին եւ նրանց անձին	080	84779	84779			56236	53621	2615	
Վճարումներ բյուջե	090	1300	1300			840	840		
Վճարումներ տոկոսավճարների հիմնադրամ	100	50	50			19	19		
Գործառնական այլ գործունեությունից ելք, այդ թվում	110					73178	71103	2615	
Ընդհանուր գործառնական գործունեությունից ելք	120					(10413)	(7798)	(2615)	
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր									
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտք	180	1935	1935			13073	7421		5652
Ոչ ընթացիկ նյութական եւ ոչ նյութական ակտիվների ձեռքբերման գծով	210	1935	1935			5652			5652
Ընդհանուր ներդրումային գործունեությունից ելք	220					(5652)			(5652)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր									
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտք	240	22000	22000			33000	33000		
Սպաքված վարկերից եւ փոխառություններից	260	22000	22000			33000	33000		
Ընդհանուր ֆինանսական գործունեությունից մուտք	270					2000	2000		
Սպաքված վարկերի եւ փոխառությունների մարումից									
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելք	300	22000	22000			2000	2000		
Ընդհանուր ֆինանսական գործունեությունից ելք									

Ներքին արժեր		340				(82671)	2615		5652
Դրամական միջոցների մնացորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին		350	1663	1379	284	9177	8893	284	

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 1 հունվարի 2004 թ. Ձեւ N 5

5.3.2. Հաշվառումային հաշվեկշռին կից ծանոթագրություններ
Հիմնական միջոցներ Աղյուսակ 2

Դասի անվանումը	տող	Նախորդ տարվա վերջին մնացորդը	Ավելացում	Նվազեցում ընդամենը	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը
Այլ հիմնական միջոցներ					
- հաշվեկշռային արժեք	090	14194	22550	3819	32925
- արժեք	091	19809	22550		42359
- կուտակված մաշվածություն	092	5615	3819		9434
Ընդամենը շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ					
- հաշվեկշռային արժեք	100	14194	22550	3819	32925
- արժեք	101	19809	22550		42359
- կուտակված մաշվածություն	102	5615	3819		9434

Կարճաժամկետ բանկային վարկեր եւ փոխառություններ Աղյուսակ 13

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարվա վերջի մնացորդը	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը
Կարճաժամկետ փոխառություններ			
- զուտ գումար	020	2000	33000
- համախառն գումար	021	2000	33000
Ընդամենը			
- զուտ գումար	050	2000	33000
- համախառն գումար	051	2000	33000

Հաշվեկշռին հոդվածների մարման (փոխհատուցման) ժամկետների դասակարգմանը Աղյուսակ 16

	տող	Կարճաժամկետ գումարներ	Երկարաժամկետ գումարներ
Ակտիվ			
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	010		32925
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	050		32925
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում	110	17677	
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	120	17677	32925
Ընդամենը ակտիվներ	130	17677	32925
Պասիվ			
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	140		10050
Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում	150		4317
Ընդամենը սեփական կապիտալ	160		14367
V. Ընթացիկ պարտավորություններ			
Ընթացիկ պարտավորություններ, այդ թվում	201	33000	
	202	3235	
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	210	36235	
Ընդամենը պասիվներ	220	36235	14367

5.3.4. Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը կից ծանոթագրություններ
Ֆինանսական արդյունքների հաշվետվություն ծախսերի ըստ բնույթի դասակարգմանը Աղյուսակ 18

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան նախորդական	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան ընթացիկ
Արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	110182	63305
Անձնակազմի գծով ծախսումներ	060	(4785)	(3245)
Մաշվածության եւ ամորտիզացիայի գծով ծախսումներ	070	(2363)	(3819)
Գործառնական այլ ծախսումներ եւ ծախսեր	080	78729	44354
Գործառնական շահույթ (վնաս)	090	24305	11887
Ոչ գործառնական գործունեությունից շահույթ (վնաս)	100	(1257)	(1760)
Զուտ շահույթ (վնաս) նախկին շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	130	23048	10127
Շահութահարկի գծով ծախս	140	22833	9616
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	150	215	511

Գործառնական այլ գործունեությունից եկամուտ եւ ծախս Աղյուսակ 19

Ցուցանիշի անվանումը	տող	Հաշվետու տարի (ժամանակաշրջան) ծախս	արդյունք
Տույժերից, տուգանքներից	060	252	(252)
Այլ գործառնական գործունեությունից	130	300	(300)
Ընդամենը	140	552	(552)

Այլ ոչ գործառնական գործունեությունից եկամուտ եւ ծախս Աղյուսակ 20

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի		Հաշվետու տարի (ժամանակաշրջան)	
		ծախս	արդյունք	ծախս	արդյունք
Անհատույց տրված ակտիվների գծով	100	1257	(1257)	1760	(1760)
Ընդամենը	120	1257	(1257)	1760	(1760)

Կ. Տ.
Ղեկավար
Գլխավոր հաշվապահ

«Արարատը» հաղթեց 11 մ հարվածներով

Երեկ կայացած 4 հանդիպումներում հայտնի դարձան Ֆոորդ եզրափակիչի վերջին մասնակիցները: Ամենասուր եւ լարված մրցադայարը ծավալվեց «Արարատի» եւ «Դինամո-Չենիթի» մրցավեճում: Առաջին հանդիպումն ավարտվել էր արարատցիների նվազագույն առավելությամբ (1-0), ուստի դաշտախան խաղում «Դինամո-Չենիթը» հենց սկզբից դիմեց վճռական գործողությունների: Սակայն ընդհանուր առմամբ խաղն ընթացավ արարատցիների առավելությամբ, որոնք առնվազն մի ֆանի անգամ դարձավոր էին գրավել մրցակցի դարպասը, բայց նրանցավոր դաիերը չօգտագործեցին Վահե Թադեւոսյանը, Միեր Ավանեսյանը եւ Արթուր Պետոսյանը, որի հարվածը հեռ մղվեց դարպասի ձողից: Իսկ ահա, «Դինամո-Չենիթն» ավելի հաջողակ գտնվեց եւ 84-րդ րոպեին Նվեր Խալատրյանի հեռահար հարվածով խփած գոլի շնորհիվ վերականգնեց երկու խաղերի ընդհանուր արդյունքը (1-1):

Հաղթողը որոշվեց 11 մետրանոց հարվածներով: Այստեղ իրեն գերազանց դրսեւորեց «Արարատի» դարպասապահ Նենաս Ռադաջան, որը 2 անգամ հեռ մղեց մրցակիցների հարվածները, իսկ վերջում դիմորւկ հարվածով գրավելով իր գործընկեր Վահան Շմավոնյանի դարպասը, հաղթանակ պարգեւեց արարատցիներին: Քառորդ եզրափակիչում «Արարատը» կմրցի «Շիրակի» հետ, որը դաշտախան խաղում էլ հաղթեց «Լոկոմոտիվին» (3-0): Գոլերը խփեցին Տիգրան Դավթյանը, Վահագն Մանուկյանը եւ Վահան Մառանջյանը:

Քառորդ եզրափակիչի մյուս զույգը կկազմեն «Բանանցն» ու «Կոտայքը»: «Բանանցը» «Վաղարշապատի» հետ դաշտախան խաղն ավարտեց ոչ-ոքի՝ 1-1 (առաջին խաղում «Բանանցը» հաղթել էր 2-0 հաշվով): Երկու գոլերն էլ խփվեցին 11 մ հարվածներով: Այի ընկան Արարատ Հարությունյանն ու Էդվին Գյադայանը: «Կոտայքն» էլ 2-1 հաշվով հաղթեց «Միկա-2»-ին: «Կոտայքից» գոլերը խփեցին Գոռ Միրզախանյանն ու Վահագն Մինասյանը, դաշտախան գոլի հեղինակը Սերգեյ Դալլաքյանն էր: Քառորդ եզրափակիչ առաջին հանդիպումները կկայանան մարտի 22-ին եւ 23-ին:

Առնյանը շարունակում է հաղթարշավը

Ռեյկյավիկում մեկնարկեց արագ շախմատի մրցաշարը 16 շախմատիստների մասնակցությամբ, որն անցկացվում է նոկաուտ համակարգով: Մասնակիցները զույգեր են կազմել եւ 2 մարտիայից բաղկացած մրցախաղում պետք է որոշեն հաջորդ փուլի ուղեգրի տիրոջը: Ռեյկյավիկում իր գերազանց ելույթներն է շարունակում Լեւոն Առնյանը, որն առաջին փուլում 2-0 հաշվով հաղթեց իսլանդացի գրոսմայստեր Հելգի Օլաֆսոնին: Նշենք, որ նման արդյունք հաջողվեց ցույց տալ նաեւ միայն Պետեր Նիլսենին, որը մարտության մասնեց Վլադիմիր Եոխինին: Գարի Կասպարովը 13-ամյա Մագնուս Կառլսենի հետ մրցավեճում առաջին մարտիան ավարտեց ոչ-ոքի եւ միայն երկրորդում տոնած հաղթանակի շնորհիվ մտավ հաջորդ փուլ: Նույնիսի 1,5-0,5 հաշիվ գրանցվեց Էմիլ Սուտովսկի-Ալեքսանդր Նաստաֆ, Ալեխեյ Դրեեւ-Մարգեյր Պետուրսոն, Յան Թիմման-Յոհան Հյարթարսոն եւ Նայջել Շորթ-Ստեֆան Քրիստիանսոն մարտիաներում: Անատոլի Կարպովի եւ Հանս Ստեֆանսոնի մրցախաղում կողմերը մեկական հաղթանակ տոնեցին: Հաղթողին որոշեց լրացուցիչ մարտիան, որում Կարպովը հաղթեց մրցակցին: Հաջորդ փուլում Լեւոն Առնյանը կմրցի անգլիացի գրոսմայստեր Նայջել Շորթի հետ: Մյուս զույգերը կազմել են Թիմմանն ու Կասպարովը, Նիլսենն ու Սուտովսկին, Կարպովն ու Դրեեւը:

Առաջատարը Գրիշչուկն է

Պոյկովսկիում մեկնարկել է Անատոլի Կարպովի անվան շախմատի միջազգային 5-րդ մրցաշարը, որին մասնակցում են 10 շախմատիստներ: 2 տուրից հետո առաջատարի դերը սանձնել է ռուսաստանցի Ալեքսանդր Գրիշչուկը, որը պարտության է մատնել Մալախովին ու Սոկոլովին: 1,5-ական միավորով 2-3-րդ տեղերում են Սերգեյ Ռուբլյովսկին ու Վադիմ Զվյագինցեւը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայկոոոը հրավիրում է աճուրդի:
Այն տեղի է ունենալու 2004 թ. ապրիլի 6-ին Հայկոոոի շենքում:
Հասցեն՝ ք. Երեւան, Խանջյան 13:
Վաճառվում են՝

Հ/Հ	Վաճառվող գույքի անվանումը	Հասցեն գտնվելու վայրը	Վաճառքի մեկն. գինը /հազ. դրամ/	Աճուրդի մասնակց. վճարի չափը /հազ. դրամ/
	Գուգարքի տարածաշրջանում			
1.	ճաշարան «Վաղինակ» իր գույքով	գ. Լեռնստով	717.4	36.0
2.	ճաշարան «Արարատ» իր գույքով	գ. Լեռնստով	1151.0	58.0
3.	ճաշարան- տաղավար	գ. Մարգահովիտ	229.5	11.5

Աճուրդը կայանալու է դասական եղանակով:
Աճուրդին մասնակցել ցանկացողները մինչեւ 2004 թ. ապրիլի 5-ը, ժամը 16.00 աճուրդային հանձնաժողովին պետք է ներկայացնեն՝
- աճուրդին մասնակցության հայտը,
- աճուրդին մասնակցության վճարի անդորրագիրը:
Մուտագրման հաշիվն է՝ 23802607570100, «Առկսիմբանկ»:
Մանրամասն տեղեկությունների համար դիմել աճուրդային հանձնաժողովին, հեռ.՝ 54-15-01:

«Տոյոտան» հրավիրում է նաեւ Վիլնյովին

«Ֆորմուլա-1» դասի աշխարհի նախկին չեմպիոն ժակ Վիլնյովը, որն անցյալ մրցաշրջանում ավարտել էր ելույթները, վճռել է կրկին մասնակցել մրցումներին: Նրանով հետաքրքրվում է ճապոնական «Տոյոտա» թիմը, որն այժմ բանակցում է կանադացի ավտոուրավորդի հետ եւ ցանկանում է մինչեւ 2005 թ. նրա հետ պայմանագիր կնքել: Ինչպես տեղեկացրել ենք, «Տոյոտան» նաեւ գերմանացի Ռալֆ Շումախերին է առաջարկել հաջորդ մրցաշրջանից հանդես գալ իր կազմում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐԱՐԱՐ ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԿԵՆՏՐՈՆԸ
Հայտարարում է
ՌՈԲԵՐՏ ՊՈՂՈՍՅԱՆ ԵՒ ՋԱՎԱԿՆԵՐ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ
Մրցանակը նախատեսված է
հետեւյալ չորս ոլորտների համար
ԿԵՐՊԱՐՎԵՍ
Գեղանկարչություն, ֆանդակ, ինստալիացիա, պերֆորմանս, խառը տեխնիկա
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
Արձակ, պոեզիա
ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ
Ստեղծագործություն կամ ստեղծագործական իմպրովիզացիա
ՎԻԴԵՈ ԱՐՏ

ԺՅՈՒՐԻ
Վարդան Ազատյան (արվեստաբան)
Վիոլետ Գրիգորյան (գրող)
Նազարեթ Կարոյան (արվեստաբան)
Անժելա Հարությունյան (արվեստաբան)
Գագիկ Ղազարե (ռեժիսոր)
Վարդան Ջալոյան (արվեստաբան)
Էդուարդ Պալասանյան (ժյուրիի համադրող)
Յուրաքանչյուր ոլորտի համար նախատեսվում է մրցանակ՝ 1,500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:
Եթե պատահում է այնպես, որ որեւէ ոլորտում չի պահովվում բավարար ֆանակի աշխատանքի կամ ժուրիի որոշմամբ չի գնվում մրցանակի արժանի աշխատանք, ապա տվյալ ոլորտի մրցանակի գումարը հավասարապես բաժանվում է մնացած ոլորտների միջեւ:
Աշխատանքները պետք է ստեղծված լինեն 2002-ի հունվարի 1-ից մինչեւ մրցանակաբաշխության վերջնաժամկետը ընկած ժամանակահատվածում:
Աշխատանքները մրցանակաբաշխությանը ներկայացնելու վերջնաժամկետն է 2004թ. ապրիլի 30-ի ժամը 17:00:
Մրցանակաբաշխությանը կարող են մասնակցել 16-ից 30 տարեկան անձինք:
Աշխատանքները ներկայացնել
Ժան եւ Ալբերտ Պողոսյան
Նորարար Փորձառական Արվեստի Կենտրոն («ՆՓԱԿ») Փավստոս
Բուզանդի 1/3 Երեւան, հեռ. 56.82.25 եւ 56.83.25
էլ-փոստ. accea@netsys.am

вклад Нарекаци
Мудрость истории

- 1 месяц - 5% годовых
- от 1000 до 10000 USD или EURO
- досрочное изъятие - в течение 1 часа и начислением 2% годовых

вклад Хоренаци
Правота разума

- 3 месяца - 6% годовых
- от 1000 до 10000 USD или EURO
- досрочное изъятие - начисление 2% в течение 1 месяца, 3% - в течение 2 месяца, 4% - в течение 3 месяца
- при пролонгации - подарок "ArCa Classic"

вклад Ширакаци
Сила красоты

- 6 месяцев - 7% годовых
- от 1000 до 30000 USD или EURO
- досрочное изъятие - до 30 дней - 2%, после 30 дней - 3% годовых

вклад Маштоц
Величие любви

- 12 месяцев - 8% годовых
- от 1000 до 30000 USD или EURO
- ежемесячная капитализация или выплата процентов
- досрочное изъятие - до 30 дней - 2%, после 30 дней - 3% годовых

ЮНИБАНК
РЕАЛЬНЫЕ ИНВЕСТИЦИИ
53 98 70
www.unibank.am

СТАНДАРТНЫЕ ВКЛАДЫ В ДРАМАХ И ВАЛЮТЕ

Срок вклада	Выплата процентов	AMD	USD, EURO
		До 5 млн.	До 10.000
до востребования		0*	0*
31 - 90 дней	в конце срока	7,5	5,5
	ежемесячно	7	5
91 - 182 дня	в конце срока	8	6,5
	ежемесячно	7,5	6
183 - 364 дня	в конце срока	8,5	7,5
	ежемесячно	8	7
365 дней и более	в конце срока	9	8
	ежемесячно	8,5	7,5

Вклады превышающие 5 млн. AMD или 10 тыс. USD, EURO и/или сроком более 550 дней - по индивидуальным ставкам.
* в отдельных случаях процентная ставка определяется на договорной основе
Минимальная сумма срочных депозитов
- 50.000 AMD
- 100 USD, EURO

АДРЕСА ФИЛИАЛОВ ЗАО "ЮНИБАНК"

- Центральный офис

г. Ереван, ул. Амиряна 12
тел: (3741) 539870
e-mail: unibank@unibank.am

- Филиалы в г. Ереване:

Филиал "КЕНТРОН"
ул. Абовяна 26
тел: (3741) 542431

Филиал "МАЛАТИЯ"
ул. Себастия 141
тел: (3741) 776627

Филиал "КОМИТАС"
ул. Комитаса 15/2
тел: (3741) 261838

- Филиалы в Армении:

Филиал "ВАНАДЗОР"
г. Ванадзор, ул. Тиграна Мец 53
тел: (37451) 40872

Филиал "ТЮМРИ"
г. Гюмри, ул. Ахтанаки 1
тел: (37441) 33055

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հայաստանի ամերիկյան համալսարանի ճարտարագիտական ֆակուլտետը սկսում է 2004-2005 ուսումնական տարվա ընդունելությունը մագիստրոսի կոչում շնորհող նորաստեղծ ՀԱՄԱԿԱՐԳՉԻ ԵՒ ՏԵՂԵԿՈՒՏՅԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ծրագրով, որը կոչված է պատրաստելու ղեկավարներ ծրագրավորման ոլորտում: Առարկաների ցանկը ներառում է.

- Համակարգչի եւ տեղեկույթի հիմնարար առարկաներ (օրինակ՝ համակարգեր, համակարգչի ճարտարապետություն, տվյալների շտեմարաններ, ծրագրավորման ճարտարագիտություն).
- Գործարար նախաձեռնություն եւ կառավարում.
- Օբյեկտային ուղղորդված ծրագրավորման լեզուներ.
- Ցանցային կառավարում, ինտերնետ տեխնոլոգիաներ:
- Դասախոսական անձնակազմը ձեւավորվում է Հայաստանից, ԱՄՆ-ից, եւ այլ երկրներից հրավիրված մասնագետներից:

Ուսանողները պահովվում են հզոր համակարգչային լաբորատորիայով, գրականությամբ, միջազգային էլեկտրոնային գրադարաններին բաժանորդագրությամբ, ոեալ աշխատանքային պրակտիկայով: Կիրառվում է միջբուհական կոոպերացիա ներառյալ արտասահմանյան համալսարանների ընդգրկմամբ:

Ծրագիրը նախատեսում է հինգ նախապատրաստական դասընթաց պատրաստվածություն չունեցող դիմորդների համար:

Ծրագրին կարող են դիմել բոլոր բակալավրի կոչում ունեցող դիմորդները, ովքեր ունեն գիտատեխնիկական կրթություն կամ աշխատանքային փորձ համակարգչային ոլորտում:

Մարտի 20-ին, ժ. 11.00-ին հրավիրում ենք ՀԱՀ-ի մեծ դահլիճ մասնակցելու բաց դռների օրվան:

Փաստաթղթերը ընդունվում են մինչեւ ապրիլի 12-ը, ժ. 15.00: Տեղեկությունների համար դիմել Երեւան, Մարշալ Բաղրամյան 40, 19 գրասենյակ Հեռ. 51-27-93, 51-27-92, 51-26-38: http://www.aua.am

Գովազդի համար զանգահարել՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիլ 69150. Տպաքանակը 3000 Ստորագրված է տպագրության 19. 03. 2004 Գինը 100 դրամ